



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

91.99  
7-52



226  
891.992-3  
Դ-52

-6 NOV 2011

ՊԵՐՁ-ՍԻՒՆԻ

# ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա

(Արտասպուած «Մշակ» և «Ընոր-Ֆար» լրագրություն)

Թ ի Փ Լ ի Զ  
Արագատիպ ՍՊ. Մարտիրոսեանցի  
Պուշկինեան փողոց, № 12.  
1903

№ 233  
891.99

Դ-52

ՊԵՐՁ-ՍԻՒՆԻ

176

# ՊԱՏԿԵՐՆԵՐ


3410



(Արտապուած «Մշակ» և «Նոր-Դար» լրագրությոց)

Թ ի Փ Լ ի Զ  
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի  
Միքայէլեան փողոց, № 81.

1903



Ա.

# Ի Ր Ա Խ Ո Ւ Խ Ն Ք

(Պարսկաստանի ղերպիշների կեանքից)

Дозволено цензурою. Тифлисъ, 18 ноября

1902 года.

Ա

Կէս օլ էր:

Արեգակի կիզիչ ճառագայթների տակ Թու-  
րանի բլուրները կարծես բոցավառուած լինէին:  
Ո՛չ անցորդ և ոչ մի կարաւան չէր երևում:  
Ամենքը ցրուել էին այս ու այն կողմ և սպա-  
սում էին եղանակի զովանալուն: Այդ պահուն  
երկու ճանապարհորդ՝ արեգակի կիզիչ ճա-  
ռագայթներից ազատուելու համար ծռուեցին  
Խորասան տանող ճանապարհից դէպի Գեավուր-  
րեղը\*):

\*.) Այս բերդը գտնվում է Խրանի և Նախկին Թուրա-  
նի սահմանագլխում: Բնակիչները պարսիկներ են:

Համնելով բերդի ստորոտում գտնուած ջըրհորին, նրանք նստեցին ջրհորի ափին և սպասում էին եղանակի զովանալուն, որպէսզի շարունակեն իրանց ճանապարհը:

Ճանապարհորդներից մէկի արտաքին կերպարանքը ցայց էր տալիս, որ դերվիչ է: Ալեգաբդ միբութը ծածկում էր ծերունի դերվիչի հսկայական կուրծքը: Երկար և գդգուած մազերն անկանոն կերպով թափուած էին նրա ուսերի վրայ:

Աչքերը խոշոր ու կրակոտ էին և ծածկուած թաւ յօնքերի տակ: Հագուստն ընդհանրապէս հնամաշ և պատառուառուած էր: Ցնցոտիների միջից աշքի էին ընկնում նրա բազուկները: Դերվիչի լայն ճակատը խիստ համակրելի կերպարանք էր տալիս նրա արտաքին տեսքին: Զեռքին բռնած ունէր մի երկաթեայ գաւազան, որի ծայրը սրի նմանութիւն ունէր և վրան փորագրուած էր «իրաւունք» բառը:

Դերվիչի ընկերն աւելի երիտասարդ էր և կազմուածքով խիստ առողջ: Աչքերը ներս էին ընկած և արիութեան ոչ մէկ նշոյլ չէին արտայայտում. կարճ միբուքը և մատերի ծայրերն ու եղունգները խինայած էին. փաքրիկ, դղումի նմանութիւն ունեցող զլուխն ածելած էր ըստ մահմեղական սովորութեան, իսկ հա-

գուստը ամինաթանկագին կտորներից էր պատրաստած:

Նրա հագուստն ու շարժողութիւնը վկայում էին նրա հոգեորական լինելը: Արդարէ նա պարսիկ հոգեորական էր և Թուրքէթ քաղաքի Ղազին, մի խիստ մոլեռանդ պարսիկ հոգեորական, որ տարին տասներկու անգամ գնում էր Մ'եշէդ՝ երկրպագելու հոչակաւոր «իմամ-Ռիզայի» ոսկերին:

Ղազին մի դրօշակ ունէր, որի վրայ նկարուած էր Ալիի աջը:

Դերվիչի համեստութեան հակապատկերն էր ներկայացնում Ղազին: Այդ նկատելի էր նաև նրանից, որ պարսիկ հոգեորականին ուղեկցում էին թուով չորս ծառայ, որոնք կատարում էին մեծ մարգարէի յաջորդի հրամանները:

Ծառաները մէկ կողմ քաշուած՝ հանգստանում էին, իսկ Ղազին և դերվիչը ջրհորի ափին նստած զրուցում էին:

— Աղա դերվիչ, պէտք է աղօթել, չէ, հարցուց Ղազին:

— Կարող էր, պատասխանեց դերվիչը, առանց շարժուելու իր տեղից:

Ղազին ոտնամանները հանեց, թեքերը յետ ծալեց մինչև արմունկները, երեսն ու ոտները լուաց, երեսը դարձրեց դէպի արեմուտք՝ դէպի

մուսուլմանների աղօթարանը, ապա սկսեց  
աղօթքի ծիսակատարութիւնը:

Մինչ Ղազին աղօթում էր՝ գերվիշը ջրհո-  
րի ափին գտնուած արմաւենու ստուերի տակ  
պառկած՝ հանգստանում էր և երբեմն-երբեմն  
նայում դէպի Ղազիի կողմը: Ահա այդ ժա-  
մանակ նրա լայն ճակատի վրայ երևան էին  
գալիս կնճիռներ, որոնք նշան էին գերվիշի  
ներքին աշխարհի ալեկոծման: Կարծես անա-  
պատի հարազատ զաւակը խորասուզուած լի-  
նէր փիլիսօփայական մատածութիւնների մէջ:

Ղազին գերջացնելով իր աղօթքը, վերա-  
դարձաւ գերվիշի մօտ: Վերջինս իսկոյն բաց  
արաւ իր հնամաշ սփռոցը և փոեց գետնին: Նրա  
պաշարեղէնը բաղկացած էր միքանի չոր «ասն-  
գակ» հացի փշրանքներից և միքանի հատ  
սոխից:

— Բարեհամեցէք մօտենալ, ասաց գերվիշը,  
քաղաքավարութեամբ հրաւիրելով Ղազիին՝ սե-  
ղանակից լինելու:

— Ո՛չ, ես ինձ թոյլ չեմ տայ ձեզ հետ միա-  
սին ճաշել:

— Ինչո՞ւ, մեծ դարմանքով հարցը եց գեր-  
վիշը:

— Որովհետև դուք չէք աղօթում մեծ մար-  
դարէին: Հետեաբար՝ ձեր հացը «հարամ» է....  
Միթէ նզովուած չի լինիլ այն ուղղափառը, որ

իրան թոյլ կը տայ ձեզ հետ սեղանակից լինելու:

— Միթէ: Հապա ոչ-մուսուլմանները հօ  
աղօթում են, ինչո՞ւ նրանց ևս պիղծ էք համա-  
րում:

— Նրանք աղօթում են, այդ ճշմարիտ է,  
բայց ոչ մեծ մարդարէին: Հետեաբար՝ նրանց  
աղօթքը Ալլահին չի հասնում և չի կարող  
հասնել:

— Բարեկամ, թողէք այդ հարցը մնայ, մօտ  
եկէք:

— Ով գերվիշ, ինչո՞ւ նախ չէք աղօթում և  
ապա ճաշի նստում: Միթէ գուք գեավուր էք,  
վրզովուած բացականչեց Ղազին և շարունա-  
կեց: — վայ իմ հոգուն. միթէ ես մեղաւոր եմ  
Ալլահի և մեծ մարդարէի առաջ, որ սրա պէս  
մեղաւոր — անհաւատ մարդու հանդիպեցի....

— Ըուտ տաքանալը, յուզուելը՝ եթէ շասեմ  
անփորձութեան, անարդարութեան նշան է,  
բարեկամ: Ինչո՞ւ էք բարկանում:

— Ի՞նչպէս չբարկանամ, երբ սուրբ եր-  
կրում, սուրբ հողի վրայ անաստուած ընկերի  
հանդիպեցի: Միթէ սրանից աւելի ցաւալի բան  
կարող է լինել ինձ համար աշխարհումս:

Գերվիշը լռեց, ոչինչ չպատասխանեց:  
Մինչդեռ ծերունին իր համեստ ճաշն էր  
վայելում, Ղազին հեռուում նստած՝ բարկու-  
թեամբ նայում էր գերվիշի կողմը:

Դերվիշը ճաշից յետոյ մօտեցաւ ջըհորին,  
ծարաւը յագեցրեց, ապա պառկեց արմաւենու  
ստուերի տակ հանգստանալու:

Ղաղին իր ծառաներին հրամայեց ճաշ  
պատրաստել: Նրա հրամանն անմիջապէս կա-  
տարուեց:

Ծառաները ասխական ճոխ սեղան պատ-  
րաստեցին և իրանք հեռացան դէպի իրանց  
նախկին տեղը:

Մարգարէի փոխանորդն սկսեց փառաւոր  
կերպով ճաշել: Ասխական ամենալնափր խոր-  
տիկներից էր բաղկացած Ղաղիի պաշարեղէնը,  
որից խիստ լաւ ախորժակով ուտում էր. նա  
Դերվիշին չհրաւիրեց: Վերջինս վիրաւորուեց իր  
ընկերի այդ կոպիտ անքաղաքավարութիւնից,  
բայց և այնպէս լուութիւն պահպանեց, առանց  
մէկ խօսք, բառ արտասանելու: Երբ Ղաղին վեր-  
ջացրեց ճաշը, ծառաներն եկան և ժողովեցին:

Ղաղիի հրամանով մէկ գորդ փոեցին գետ-  
նին, իսկ իրանք զնացին հանգստանալու: Մար-  
գարէի փոխանորդը կրկին աղօթեց Ալլահին և  
նրա մարգարէին՝ երեսն ուղղած դէպի Մեկքա...

Երբ աղօթքը վերջացրեց, սկսեց բարձրա-  
ձայն աղաղակել.

—«Փառք, հազար բերան փառք քեզ, ով  
մեծդ մարգարէ»:

—Լոիր, անպիտան, գուաց դերվիշը դառ-  
նալով Ղաղիին:

—Ինչո՞ւ, լիբր դերվիշ, միթէ մեղք ու յան-  
ցանք է Ալլահին աղօթելը:

—Լոեցէք, կեղծ կրօնաւոր, եթէ ոչ մահը  
անխուսափելի է ձեզ համար. տեսնում էք այս  
գաւաղանը, գոչեց դերվիշը գաւաղանի ծայրը  
ուղղելով դէպի Ղաղին: Վերջինս ապուշի նման  
սկսեց նայել դերվիշի երեսին: Կրօնական ֆա-  
նատիկոսութիւնը, որով վառուած էր մարգա-  
րէի փոխանորդը, կատաղեցրեց մոլեռանդ մու-  
սուլմանի հոգին: Նա պատրաստուեց յարձակ-  
ուել դերվիշի վրայ և տեղն ու տեղը սպա-  
նել նրան, բայց երբ աշքերը վեր բարձրացրեց  
և քննական հայեացքով նայեց իր հակառա-  
կորդին, նուաստացաւ: Ծառաներին օգնութեան  
կանչել չէր կարող. նրանք հեռուում պառկած՝  
ընկել էին անոյշ քնի գիրկը, ուստի Ղաղին  
ստիպուած եղաւ լուութիւն պահպանել:

—Դուք, Ալիմքպար (այդպէս էր կոչվում  
Ղաղին), ինչո՞ւ համար փառաբանեցիք մեծ մար-  
գարէին:

—Որովհետև նա միակ միջնորդն է մեր և

Ալլահի միջն: Մենք նրա միջնորդութեամբ կարող ենք «Ձեննէթի» արժանանալ:

—Եթէ դուք մարդասպանութիւն կամ մի ուրիշ չարիք գործէք, մեծ մարդարէն կարող է ձեզ «Ձեննէթի» արժանացնել:

—Կարող է, դրական կերպով պատասխանեց Դագին:

Դերվիշը ժպտաց:

—Ինչու ժպտացիք, դերվիշ. միթէ յիմար խօսք ասացի, վրդովուած ձայնով հարցրեց Դագին:

—Լսիք, Ալիաքպար: Դուք յիմար էք, թէ խելօք, այդ ինձ այնքան չէ հետաքըքը ում. բայց մահմեդականների՝ ընդհանրապէս առած, այնքան խելացի չէք, որքան դուք կարծում էք: Ինչու: Ահա թէ ինչու: Զեր տուած բացատրութեան համաձայն, մեծ մարդարէն համ արդարների, համ մեղաւորների պաշտպան է հանդիսանում Ալլահի մօտ: Միթէ այդպիսի դատողութիւն, որ յատուկ է մահմեդականներիդ, յիմարութեան սահմանից դէնը չի անցնում:

—Ուրեմն դուք մարդարէին չէք հաւատում: 2էք ընդունում որ նա է մեր գործերի առաջնորդը. նա է փառք, պատիւ, հարստութիւն և աղքատութիւն բաժանողը...: Հերքում էք այս բոլորը:

—Այն, պատասխանեց դերվիշը և շարունակեց.—արդարև եթէ մեծ մարդարէն է բաժանում մարդկանց փառք, պատիւ, ինչու այդ ամենը տալիս է նրանց, որոնք ոչ մի արժանաւորութիւն չունին: Միթէ այդպիսի դատողութեամբ, որով պարծենում էք դուք, Ալիաքպար, մենք չենք հասնում այն եղբակացութեան՝ թէ մեծ մարդարէն սոսկ անձնաւորութիւն է և չարժէ նրան պաշտել, որպէս «Ալլահի առաքեալի»...: Արժէ պաշտել կեղծութիւնը, Ալիաքպար:

—Ո՞հ, ականջներ, խլացէք, սա Ալլահին էլ է հայհոյելու:

—«Ալիաքպար, սառնասրտութեամբ լսեցէք ինձ: Ալլահը մեղ մարդ ստեղծելով կարծում էք չէ գժբաղդացըրել մեզ: Եթէ նա՝ Ալլահը, մեղ մեղու ստեղծէք, մենք սիզաւէտ սարերի ամենահոտաւէտ ծաղիկների հիւթերով պէտք է ապրէինք. իսկ եթէ արծիւ կամ մի ուրիշ թուշուն ստեղծուէինք մենք, կարո՞ղ էք երեակայել մեր բաղդաւորութիւնը, Ալիաքպար...: Մենք վեր կը սաւառնէինք և երկնակամարի անհուն տարածութիւնից կը դիտէինք այս աշխարհը, ուր ամեն ինչ չարչարանք, վիշտ ու տանջանք է...:

«Դուք, Ալիաքպար, շարունակեց դերվիշը, ասացէք, խնդրում եմ, երբ էք լսած կամ տե-

սած, որ խողերը փառք տան մեծ մարգարէին. բայց և այնպէս նրանք պահպանում են իրանց գոյութիւնը՝ պատռելով գետնի սիրտը...: Այդպէս են նաև մարդիկ...: Ում սուրն աւելի է կտրում, նա աւելի և աւելի է չաղանում: Ուժեղներն ամենաբաղդաւորներն են: Եւ եթէ ձեզ նման բաղդաւորների աղօթքի ճայնը մեծ մարգարէն հասցնում է Ալլահի աթոռին, միթէ բիւրսոր սովեալների, հարստահարուածների, թոյլերի և անօգնականների թափած գառն արտասունդների հեծկլտոցը մեծ մարգարէն չի հասցնում Ալլահի աթոռին...: Եթէ հասցնում է, երբ եկաւ «երկնքի դատաստանը»: Հարագործը, լիրն ու խարեբան, հարստահարիչն ու բոնաւորը տակալին շարունակում են իրանց դարեւոր արհեստը, իսկ երկինքը լուռ ու մունջ է. նա վերեկց արդարութեան որոտումներ չէ թափում:

Ղաղին, որ բոլոր ժամանակը լուռ ու մունջ լսում էր դերվիշի ասածները, ոչինչ չպատասխանեց:

Արեգակն արդէն թեքուել էր դէպի իր մուտքը:

Քամին թեթև կերպով սկսեց փշել: Մեր ճանապարհորդները վեր կացան և շարունակեցին իրանց ճանապարհը:

Ղաղին նստած ջորու վրայ՝ ամենքից առաջ

էր զնում. Նրան հետեւում էին իր ծառաները՝ նստած իրանց աւանակների վրայ: Իսկ վերջիններին ոտարոբիկ հետեւում էր ծերունի դերվիշը:

## XXX

Լուսնկայ երեկոյ էր: Լուսինը կապոյտ երկնակամարի անհուն տարածութեան մէջ լողալով առաջ էր ընթանում. կարծես մի ահագին աղամանդ էր վայլում ծովի երեսին:

Այդ պահուն մեր ճանապարհորդները գտնը-վում էին Թուսի<sup>\*)</sup> Ճարիքապատ կոչուած աւանում: Ղաղին վառաւոր կերպով բաղմած գորգերի վրայ՝ զալեան էր ծխում: Իսկ նրա ծառաները երեկոյեան համար ուտելիքի պատրաստութիւններ էին տեսնում:

Դերվիշը նրանցից քիչ հեռու փռել էր գետնին իր հնամաշ եղջլւրի մորթին և վրան նստած՝ նայում էր դէպի աստեղազարդ երկինքը:

\*) Թուսը՝ այժմեան Մելէդ քաղաքն է, որ գտնվում է Խորասանում:

Ղաղին որ շատ էր հետաքրքրվում դերվիշի  
անձնաւորութեամբ, ծառաներից մէկին հրա-  
մայեց՝ դերվիշին կանչել: Նրա հրամանն ան-  
միջապէս կատարուեց:

Դերվիշն եկաւ և բազմեց Ղաղիի մօտ:

—Ազա դերվիշ, ասացէք, ինդում եմ, գուք  
ի՞նչ կրօնի, ի՞նչ դաւանանքի տէր էք: Ես տես-  
նում եմ, որ գուք ուղղափառի ողի շունէք,  
որ խիստ ցաւալի է:

—Ես պատկանում եմ «հրաւունքի» վարդա-  
պետութեան:

—Այսինքն քրիստոնեամյ էք:

—Ո՛չ:

—Մովսիսական:

—Ո՛չ:

—Ուրեմն ուղղափառ էք, այս անդամ ու-  
րախութեամբ բացականշեց Ղաղին:

—Եւ ոչ մահմեղական:

—Ցաւալի՛ է, խիստ ցաւալի. ուրեմն բուդ-  
դայական էք:

—Ո՛չ:

—Բարիական:

—Ո՛չ:

—Ալի-ալլահական էք:

—Ո՛չ, ո՛չ:

—Հապա ի՞նչպէս է կոչվում ձեր կրօնը:

—Արդէն ասացի, որ իմ դաւանած կրօնը  
«հրաւունք» է կոչվում:

—Այդ ի՞նչ տեսակ վարդապետութիւն է.  
առաջին անգամն եմ լսում: Ի սէր Ալլահի և մեծ  
մարդարէի, բացատրեցէք ի՞նձ ձեր դաւանանքի  
գլխաւոր սկզբունքները:

—«Մեծ ուրախութեամբ, պատասխանից դեր-  
վիշը և շարունակեց.—Նախ պէտք է իմանալ,  
թէ ովքիր պատճառ եղան «հրաւունք» վար-  
դապետութեան լոյս աշխարհ գալուն:—2արիք-  
ները, որոնց մարդիկ իրանց համար կրօն  
դարձրին և նրանց անունով սկսեցին իրար  
վրայ բռնանալ: Ահա միակ պատճառը՝ «հրա-  
ւունք» վարդապետութեան ծնուելուն: Միթէ  
այդպէս չէ, Ալիաքբար. գուք ի հարկէ, քաջ  
ծանօթ կը լինէք իսլամական պատմութեան  
հետ: Նա կրօնի անունով ո՞րքան աւելումներ,  
անգժութիւններ, ո՞րքան ամնմեղ և իզուր արիւն  
է թափել և թափում է այսօր: Գալու միւս  
կրօններին՝ այսքանը միայն կ'ասեմ, որ նրանք  
էլ իրանց հերթում միենոյն յանցանքն են գոր-  
ծել՝ աւելի կամ պակաս չափով:

«Յայց միթէ այդպիսով աշխարհու կ'առաջա-  
դիմէ և մարդիկ բաղդառը արարածներ կը լի-  
նին: 2եմ կարծում: Թերթեցէք կրօնների  
պատմութեան էջերը, այն ժամանակ իմ ասած-  
ները ձեզ հասկանալի կը լինին, Ալիաքբար:

«Բայց «հրաւունքի» վարդապետութիւնը, առաջ տարաւ գերվիշը, այդպիսի ստոր ոգով չի գործում: Նա ազատ է թողնում անհատին, ինչ ձևով կամ ինչ հասկացողութեամբ ուզում է պաշտել միակ Ալլահին, բայց ոչ հրապարակով, այլ իր սրտի խորքում...: Ալլահին պաշտելու ծիսակատարութիւնների համար արիւնահեղութիւններ և զանազան տարածայնութիւններ չի ընդունում «հրաւունքի» վարդապետութիւնը:

«Վերջինս անտեսանելի Ալլահին ցած է իջեցնում երկնքից և նրան անուանում է լո ի զ ճ:

«Մարդիկ պարտաւոր են լսել իրանց խղճի ձայնին, միևնոյն ժամանակ իրանց բոլոր գործողութիւնները ենթարկել «հրաւունքի» անաշառ դատաստանին: Ո՞վ չէ գործում լո զ ո վ և ի ր ա ւ ո ւ ն ք ո վ՝ նա դադարում է մարդ լինելու իրաւունքից: Մարդիկ եղբայրներ են, նրանց չպէտք է անջատել միմեանցից, այլ մօտեցնել, հարազատացնել իրար հետ՝ մտքով ու գաղափարով:

«Ահա այդ ժամանակ մենք, մարդիկս աշխաղիս երեսին ամենաբաղդաւոր արարածները կը լինինք:

«Ահա սրանք են «հրաւունք» վարդապետութեան գլխաւոր սկզբունքները, Ալիմքպար. Ես

վերջացրի իմ ասելիքս: Եա հու, եա հակակ \* )...

— Անիծեալ գերվիշ, անհաւատութեան աւզանում ես մկրտուած: Թոնդ գիշերը խոռով լինի գլխիդ: Հեռացիր ինձնից, ո՞վ պիղծ անհաւատ...

Դերվիշը լուռումունջ հեռացաւ նրանից: Նա գնաց և մի անկիւն զտաւ հեռում, ուր պառկեց քնելու: Գլուխը դրեց մերկ գետնի վրայ, երեսը դարձրեց վերև, դէպի երկինք, ապա բարձրածայն սկսեց աղաղակել.

— Ո՞վ ի բ ա ւ ո ւ ն ք...

540

— ո ւ ս ք ո ւ ս ք ո ւ ս ք ո ւ ս ք

\* ) Ո՞վ արդարութիւն, ո՞վ իրաւունք:



իրարից տարբեր պայմաններում: Ինչու: Ահա  
երբ այս մտքերը պաշարում են ինձ, դառն յի-  
շողութիւններ են զարթնում իմ մէջ: Յիշում  
եմ մօտիկ անցեալի թողած տպաւորութիւնը:  
Այն, յիշում եմ և սոսկում: Որքան տիսուր և  
բնորոշ է իմ յիշածը, այն փոքրիկ զրոյցը, որ  
ահա պիտի պատմեմ:

Բ

## ՔԱՌ ԵՓԵՑԷՔ

(Աղքատի յիշատակարանից)

Հ

Երբ անցնում եմ հարուստների պալատա-  
նման բնակարանների մօտով՝ խիստ յուգւում  
եմ և արտասուքը խեղդում է ինձ: Այդ աւելի  
զգալի է լինում այն ժամանակ, երբ փափկա-  
սուն տիկինները նստած իրանց ամուսինների  
կողքին՝ լուսամուտներից նայում են դէպի փո-  
ղոց, որտեղով անցուդարձ են անում աղ-  
քատները: Ես ստիպուած կանգ եմ առնում և  
քննական հայեացքով դիտում եմ կրեսուների  
կեանքը... Աստուած իմ, ո՞րքան տարբերու-  
թիւն նրանց և աղքատների վարած կեանքի  
մէջ...

Այդ երկու դասակարգն ապրում, շնչում է  
միևնոյն արեգակի, միևնոյն լուսնի տակ, բայց

«Սլանից միքանի տարի առաջ,—այսպէս է  
սկսվում աղքատի յիշատակարանը,—հօրս բաղդի  
անիւր շուռ եկաւ: Նա մեր քաղաքի ամենա-  
հարուստ վաճառականներից մէկն էր: Բնաւո-  
րութեամբ և վարք ու բարքով խիստ բարի:

Այն, նա բարի և ողորմած էր՝ բառիս բուն  
նշանակութեամբ: Ես թէպէտ և փոքր էի  
այդ ժամանակ, բայց տակաւին յիշում եմ՝  
քանի՛քանի աղքատներ են բաղիսիլ մեր դու-  
ռը, հօրիցս առատ ողորմութիւն ստացել և  
օրհնելով հեռացել...

Բայց երկրագնդի վրայ ի՞նչ կայ անփոփոխ: Մեր բաղդը փոխուեց: Առեւտրական ձախորդ հանգամանքներն առիթ եղան մեզ աղքատանալու. այս, աղքատացանք, խիստ աղքատացանք...

Անցաւ միքանի տարի. մենք մոռացուեցինք և ընկանք «ամենքից մոռացուած աղքատների» դասը:

Հայրս զեռ երխտասարդ էր, բայց մազերը ճերմակեցին: Նա անազնիւ միջոցի շդիմեց, որպէս սովորաբար վարվում է աղքատացողների մեծամանութիւնը: Նա համեստն առաւ և սկսեց մշակութեամբ պարապել մեր քաղաքում: Օրական միքանի կոպէկ վաստակելով՝ նա ուրախ-ուրախ տուն էր վերադառնում, իսկ մայրս ջուր էր տաքացնում և նրա ոտները լուանում: Ես և երեք փոքրիկ քոյրերս շրջապատում էինք մեր ծնողներին: Ո՞րքան էին միխթարվում նրանք մեզանով...

Ահա այսպէս անցնում էին մեր օրերը: Բայց բաղդը կարծես երդուել էր իր վերջին մահաբեր հարուածն իջեցնել մեր գլխին: Այդպէս էլ եղաւ: Հայրս սաստիկ հիւանդանալով՝ մտաւ անկողին: Մեր վիճակը աւելի և աւելի վատթարացաւ...

Անցաւ, բոլորեց ամբողջ տարին, բայց մեր միակ աշխատաւոր ձեռքը զեռ տնքում և հալ

ու մաշ էր լինում անկողնում: Ի՞նչպիսի դառն, անմիխթար և սկ օրեր եկան մեզ համար: Մենք ստիպուած անելանելի հանգամանքներից՝ եղած-շեղածներս կիրակի օրերը դուրս էինք բերում շուկայ և ամենաշնչին գնով վաճառում... Կարճ ժամանակից յետոյ մենք այլևս ոչի՞նչ, ոչի՞նչ չունէինք... Մեր աղքատութիւնը հասել էր իր գագաթնակէտին: Թշուառ և ծանր վիճակ...

Մայրս, մեր տան միակ յոյսը, սկսեց ողորմութիւն խնդրել: Ես զեռ յիշում եմ՝ ինչպէս միասին շըջում էինք փողոցներում և ողորմութիւն խնդրում անցուդարձ անողներից: Ողորմութիւն խնդրել... զդուելի՛ արհեստ. բայց գոյութեան խնդիրը ստիպում էր, ով կարող է մեզ մեղադրել...

## xx

Առաւօտ էր: Ես և մայրս կանգնած փողոցում՝ ձեռք էինք մեկնում հարուստներին, որոնք կառքերով այս ու այն կողմն էին անցնում: Այդ պահուն մի պարոն՝ վաթաթուած

տաք մուշաակում, կառքով անցնում էր: Մայրըս ձեռքը մեկնեց դէպի նրան: Պարոնը նայեց... Կառքը կանգնացնել տուաւ և դարձաւ դէպի մեր կողմը.

—Ո՞վ էք դուք:

—Դուք ճանաչում էք մեղ, պատասխանեց նրա հարցին մայրս:

Արդարեւ նա ճանաչեց մօրս: Պարոնը՝ հօրս ամենամտերիմ ընկեր վաճառականներից մէկն էր: Մտերիմ՝ այն ժամանակ միայն, երբ մենք էլ հարուստ էինք... Մայրս,—ինչպէս յետոյ ասաց ինձ,—շատ անգամ էր նրան ընդունել մեղ մօտ և շքեղ կերպով հիւրասիրել: Խեղճ իմ մայր, այժմ նրանից ողորմութիւն էր իննըրում:

—Քոյրիկ, ճաշից յետոյ կարող էք գալ ինձ մօտ. ես կը հոգամ ձեր մասին, անհնդ եղէք, ասաց նա և ծառային հրամայեց կառքը քշել: Նա գնաց: Նրա խօսքերը մեղ նոր կեանք, նոր ուրախութիւն պատճառեցին: Շատպեցինք տուն և եղելութիւնը յայտնեցինք հօրս:

Վերջինս, որ հազիւ թէ կարողանում էր նստել անկողնում, խիստ ուրախացաւ և վեր կացաւ նստեց անկողնի մէջ:

—Փառք Աստուծոյ, երեկի հասել է երախտագիտութեան ժամը. ես այդ պարոնին շատ անգամ եմ օգնել. բայց փոխարէնը չսատացայ: Երեկի նախախնամութիւնը ազդել է նրա անըզ-

գայ սրտին և այսօր նա փափագում է իր բարյական պարտքը հատուցանել...

—Գնացէք, սիրելինքը, Աստուած մեծ է, ասաց հայրս յուզուած ձայնով և կրկին պառկեց...

Ճաշից յետոյ մօրս հետ միասին գնացինք դէպի պարոնի տունը:

Սկզբում ծառան ուզեց մեղ վնագել: Մենք նրան հասկացրինք, որ պարոնի հետ գործ ունենք: Նա գնաց իր տիրոջ մօտ և միքանի բոպէից յետոյ վերադառնալով՝ թոյլ տուաւ մեղ սանդուխներով վեր բարձրանալ: Մենք մտանք պարոնի մօտ: Աստուած իմ, ինչպիսի շքեղութիւն, քանի՛-քանի թանկադին առարկաներ կային այդտեղ, որոնք լոկ զարդարանքի տեղ էին ծառայում...

—Դուք էք. շատ բարի, համեցէք ներս, քաղաքավարութեամբ ասաց նա և տեղից վեր կենալով՝ մօրս հրաւիրեց միւս սենեակը: Մայրըս զողգողալով հետեւց նրան... Իսկ ես պարոնի պատուէրի համաձայն ստիպուած էի ըսպասել: Երկար ժամանակ անցաւ, բայց նրանք չվերադարձան: Ես արդէն յոգնել էի. նստել չէի համարձակվում: Ոտներս սկսեցին խիստ ցաւ զգալ: Յանկարծ միւս սենեակից աղաղակ լսուեց, ես իսկոյն ճանաչեցի մօրս ձայնը, որ ասում էր.

— Մպանիր, միայն չեմ դաւաճանի. դու՝  
պարո՞ն, հարուստ ես, այդ գիտենք. բայց քո  
փայլուն ոսկիներով մեր, աղքատներիս պատի-  
ւը գնել, ինչպէս հրապարակների և շուկաների  
ապրանք, չես կարող...

— Մայրիկ, ես այստեղ եմ, մի վախենար,  
զոռացի ես երեխայական պարծենկոտութեամբ  
և գնացի դէպի միւս սենեակը, որտեղից դուրս  
վաղեց մայրս և զիմելով դէպի ինձ ասաց.

— Ե՛կ, նրդիս, հեռանանք այս պիղծ և  
անպիտան հարստի տնից...

Մենք շտապ քայլերով դուրս եկանք փո-  
ղոց:

Աբտասուքի կաթիլները ողողում էին մօրս  
գունատ դէմքը: Նա լաց էր լինում: Բայց ին-  
չու: Թէպէտ ես այն ժամանակ չէի կարող  
իմանալ մօրս լաց լինելու պատճառը, բայց  
մանկական հոգիս արդար բարկութեամբ վըր-  
դովկում էր՝ տեսնելով մօրս հոգեկան դրու-  
թիւնը...

— Մայրիկ, այն շուն-պարոնը քեզ ծեծեց,  
ինչու ես լաց լինում:

— Այդ յետոյ կ'ասեմ, որդիս, ։ հօրդ ոչինչ  
շասես:

— Ինչու:

— Նա ծանը հիւանդ է. եթէ յուղուի, կա-  
րող է մեռնել:

— Եթէ այդպէս է, չեմ ասի:  
— Ապրես, խելօք որդիս:  
— Մայրիկ, ապա ինչ պէտք է ասենք հայ-  
րիկին. չէ՞ որ նա հիմա մեզ սպասում է:  
— Կ'ասենք տանը չէր, կարճ պատասխանեց  
մայրս:

Խեղճ իմ մայր: Ես այժմ, միայն այժմ  
եմ հասկանում այդ կծու խօսքերի նշանակու-  
թիւնը: Մ'ի, ինչ կը լինէր, եթէ այն ժամա-  
նակ հասկանայի այդ բոլորը, բաղդաւոր կը  
լինէի ես...

### XXX

Այս դէպքից անցաւ վեց ամիս:  
Հայրս դեռ հիւանդ պառկած էր: Մեր հա-  
րեանները՝ թէ հարուստ և թէ աղքատ, ամեն-  
քը զարդարուած, զուգուած, ուրախ սրտով  
սպասում էին նոր-տարուան. վրայ հասաւ և  
նոր-տարին:

նոր տարի, նոր կեանք, բայց ոչ աղքատ-  
ների համար...

Յունվարի առաջին օրն էր. Եղանակը  
ցուրտ. Փշում էր բքարեր քամին. ձիւնը երկրն-  
քից առատութեամբ մաղվում էր. Քամին քա-  
ղաքի ամեն մի ծակ ու ծուկ լցրել էր ձիւնով:  
Մեր հարեանները քաշուած իրանց տները,  
հանգիստ և ուրախ կեանք էին անցկացնում:  
Իսկ մենք: Ո՞րքան դժբաղդ արարածներ են  
աղքատները: Երկինքն անգամ կարծես երես է  
դարձնում նրանցից. Նա ևս ճնշում, հալածում  
է բաղդի երեսից հալածուածներին... Մենք  
վառարան ունէինք, բայց փայտ չկար: Փոքրիկ  
քոյրերս մտան հնամաշ և պատառոտուած ան-  
կողինը, սոված փորով և ճնշուած ձայնով ա-  
ղաղակում էին.

—Մայրիկ, հաց, սոված ենք, սոված...  
Բայց հաց ո՞րտեղից գանէինք: Նա սրբութեան  
պէս մի հաղուագիւտ բան էր դարձել մեզ հա-  
մար: Փոքրիկները կրկին աղաղակեցին.

—Մայրիկ, ախար մըսում ենք, սոված ենք.  
ինչու հաց չես տալիս:

Արդարե նրանք յարգելի պատճառներ ու-  
նէին. Երկու օր էր, որ ոչինչ չէին կերել: Նը-  
րանք մըսում էին, որովհետև տաք հագուստ  
շունէին,—անկողին նոյնպէս. վառելու փայտ և  
չկար: Կարծես այդ գեռ բաւական չէր, քամին էլ՝

բոլորի պակասը լրացնելու համար, ձիւնը պա-  
տերի ճեղքերով բերում, թափում. Էր ներս,  
որով սենեակը աւելի և աւելի էր ցըառում:

—Մայրիկ, մըսում ենք, երբորդ անգամ ա-  
ղաղակեցին փոքրիկները: Նրանց ձայնը հայրս  
լսելով սկսեց լսելի ձայնով հեկեկալ անկողնում:

Հայրական սիրտ, ինչ ես դու: Նրա ներսը  
ալէկոծվում էր, և այն աղի արտասուքը, որ  
թափվում էր նրա աչքերից, նմանում էին ծո-  
վի կատաղի ալիքներին, որոնք ուժգնութեամբ  
զարկուելով ափերին՝ փշրում, ոչնչացնում են  
ամեն ինչ...

Մայրս չդիմացաւ, նա էլ սկսեց արտասուք  
թափել: Բայց ես և փոքրիկ քոյրերս ոչինչ  
չէինք հասկանում: Միայն մեր ծնողների վի-  
ճակը, բնականաբար, ազդում էր նաև մեր ման-  
կական անմեղ սրտերի վրայ:

Այդ պահուն ներս մտաւ մեր տանտիլու-  
հին, որ մի գեղեցիկ և բաղդաւոր կին էր: Նա  
շբարեհաճեց մեզ ողջունել, այլ դրա փոխարէն  
կոպիտ կերպով գոռաց.

—Գուրք, անիրաւ աղքատներ, Երբ պէտք է  
վճարէք ձեր պարտքը:

Մայրս նրան պատասխանելու փոխարէն մի  
տխուր հայեացք ցցեց նրա կողմը:

—Ինչու էք լուռմ, լիբր և կեղտոտ աղ-  
քատներ, երեխ ուղում էք դուրս վոնդեմ:

— Տիրուհի, ոչինչ չունենք. ժամանակը դեռ  
չէ լրացած, սպասեցէք. տեսնում էք, որ երե-  
խաներս սոված թափուել են մերկ գետնի վրայ:

— Լուիր, աներես ու անամօթ, գոռաց հօրս  
վրայ տիրուհին և գնալով դէպի փոքրիկ քոյ-  
րերիս կողմը, բացականչեց.

— Այս ի՞նչ է, ստախօս աղքատներ:

— Տիրուհի, ի սէր Սստուծոյ, ձեւը միք տալ-  
այնքան հարստութիւնից այդ մէկ հատ հնա-  
մաշ գորգն է մնացել. թողէք մնայ իր տեղում.  
չէ՞ որ երեխաներս դրա վրայ են մթնացնում  
իրանց սկ օրը...

— Դուք, գարշելի աղքատներ, փող չէք տա-  
լիս, փող հասկանում էք. ես այս գորգը կը  
տանեմ ի հաշիւ փողի տոկոսի, — ասաց նա և  
գորգի ծայրից բռնելով այնպէս ուժգնութեամբ  
քաշեց, որ քոյրերս թափուեցին խոնաւ յատա-  
կի վրայ:

— Տիրուհի, այդ մւր ես տանում. հապա  
մենք ի՞նչ անենք, աղերսեց մայրո:

— Քար եփեցէք, պատասխանեց տիրուհին  
և գորգն առնելով՝ դուրս գնաց:  
Անդո՞ւթ մարդիկ:

## IV

Այդ հոյակապ տունը՝ որի ներքեվ յարկի  
ամենախոնաւ սենեակներից մէկում ապրում  
էինք, մի ժամանակ մեր սեպհականութիւնն էր  
եղել:

Այն օրերում, երբ բաղդը ժպտում էր մեզ  
իր կեղծաւոր երեսով, ապրում էինք այդ պա-  
լատանման շինութեան ամենալաւ յարկում: Բայց  
երբ անգութ բաղդի երեսից հալածուեցինք,  
մեր սեպհականութիւնն անցաւ ուրիշի ձեռքը,  
իսկ մենք նետուեցինք խոնաւ, մութը նկուղ-  
ներից մէկը: Մեզ խոստացան թոյլ տալ տասը  
տարի ձրիաբար ապրել այդտեղ, բայց ամիսը  
դեռ շլացած՝ մեզանից տան վարձ պահանջե-  
ցին: Ո՞րքան անխիղճ են հարուստները, որոնց  
խոստումները ոչինչ նշանակութիւն չունեն:

— Ո՞հ, այլևս տանել չեմ կարող այսքան  
զըկանքները. օգնիր, Թաքուհի, ուզում եմ հագ-  
նուել, նուազ և լացախառն եղանակով ասաց  
հայրս տան տիրուհու դուրս գնալուց յետոյ:

—Ո՞ւր պէտք է գնաս:  
—Երեխաներիս մահը աշքովս չեմ ուզում  
տեսնել. թնդ գնամ, կորչեմ. ախ, ինչու հայր  
եղայ, Աստուած իմ...

Մայրս սկսեց լաց լինել: Հայրս յուզուած  
ձայնով դիմեց նրան.

—Սիրելիս, մի յուսահատուիր, օգնիր հագ-  
նուեմ: Թէպէտև ուժերս սպառուել են, բայց  
երեխաներիս աղաղակը թուլացած ու ցամաքած  
երակներիս մէջ նոր արիւն են հոսեցնում:  
Այսրան տարեկան տղամարդ եմ, բայց ոչ ոքից,  
նոյնիսկ իմ ծանօթներից օգնութիւն, ողորմու-  
թիւն չեմ խնդրել, այլ միշտ օգնել, ձեռք եմ  
մեկնել կարօտեալներին... չերթը հիմա իմսէ,  
ես պէտք է ձեռք պարզեմ...

—Միսար ցուրտ է, կը մրսես:

—Լսիր ինձ, վճռական կերպով պատաս-  
խանեց հայրս:

Մայրս մօտեցաւ և օգնեց հօրս հագ-  
նուելու: Հայրս ոտի կանգնելով՝ յենուեց իր գա-  
ւազանին և դիմելով մօրս ասաց.

—Գնա հարեաններից մէկ կաթսայ խընդ-  
րիր, թերես ես էլ կարողանամ եփելու մի բան  
բերել: Ապա դիմեց ինձ և ասաց.

—Ե՛կ, որդեակա, առաջնորդիր ինձ:

## ▼

Մենք դուրս եկանք փողոց: Զիւնը դեռ  
մաղում էր երկնքից: Քամին դադարել էր:  
Կառքերը արագութեամբ այս ու այն կողմն  
էին անցնում: Հայրս կորագլուխ կանգնած փո-  
ղոցի մէջ՝ մտածում էր:

Ի՞նչ էր արդեօք նրա մտածութեան պատ-  
ճառը, ես շգիտէի: Ես մրսում էի, այն, ամ-  
բողջ մարմնով դողդողում և ատամներս իրար  
էին զարկվում:

—Որդեակս, գնանք դէպի եկեղեցու կողմը,  
այնտեղ բարի մարդիկ շատ կը լինին:

Մեր քայլերն ուղղեցինք դէպի հոյակապ  
եկեղեցու կողմը: Ժամասացութիւնը նոր էր  
վերջացել:

Ծխատէր քահանան երբ մեզ տեսաւ, մօտե-  
նալով՝ հարցրեց.

—Մեռել ունէք:  
Հայրս փոխանակ պատասխանելու, մօտե-

ցաւ և խոնարհութեամբ համբուրեց քահանայի աշը:

— Նորածնունդ ունէք, կրկին հարցուեցքահանան:

— Ո՞չ առաջինը և ոչ երկրորդը, պատասխանեց հայրս:

— Աստուած տայ, որ լինի, պատասխանեց քահանան և հեռացաւ:

— Քրանք են Աւետարանի քարոզողները. անիծուեն այդպիսիները, ասաց հայրս քահանայի ետևից: Մենք ուզում էինք հեռանալ եկեղեցու բակից. այդ ժամանակ մի կաղ, կարճահասակ ծերունի մօտեցաւ մեղ.

— Դո՞ւ ես, բարեպաշտ քրիստոնեայ. ինչո՞ւ չես երեսում, Պօղոս, ասաց նա հօրս: Վերջինս պատասխանեց.

— Հիւանդ պառկած էի, պարոն երէցփոխ:

— Աստուած առողջութիւն տայ:

— Պարոն երէցփոխ, գուք գիտէք, որ ես էլ ժամանակին մի մարդ էի՝ առատանեռն դէպի եկեղեցին...

— Ուղիղ է, ուղիղ է:

— Բայց այժմ, պարոն երէցփոխ, հանգամանքները փոխուել են և ինձ խիստ նեղ դրութեան մէջ դրել:

— Աստուած եղածն օքննէ. տնւը աեսնեմ, մըքան ես տալիս:

Հօրս ճակատի վրայ կնճիռներ կիտուեցին:

— Օքնեցք, պարոն երէցփոխ, զաւակներս այս տօն օրին մերկ ու քաղցած են:

— Մենք ստանում ենք միայն...

— Դուք էլ չէք օդնում, հարստահարիչներ միթէ այս տունը (հայրս ձեռքը մեկնեց դէպի եկեղեցու կողմը) նըրա համար է կառուցուել, որ հարստահարիչներիդ ապաստարան լինի:

— Դո՞ւրս, գո՞ւրս, մնհաւատ, գոռաց մեզ վրայ երէցփոխը:

— Ես հեռանում եմ, բայց անէծքս թողնում եմ ձեզէմների վրայ:

Մենք հեռացանք եկեղեցու բակից:

— Որդեակս, գնանք դէպի առաջնորդարան. եպիսկոպոսը բարի և ողորմած է, թերես նա մեզ օգնէ: Միքանի բոպէից յետոյ հասանք առաջնորդարանն: Մեր քաղաքի առաջնորդը, որ միջին հասակով, ալեզարդ միրուքով մի ծերունի էր, այդ երեկոյ նստած առաջնորդարանի հիւրասենեակում՝ քաղաքի ամենահարուստ մէկ վաճառականի հետ զըսց էր անում: Հայրս սկսեց ողորմութիւն խնդրել եպիսկոպոսից: Ո՞քան զժուարութեամբ էին դուրս գալիս հօրս բերանից խօսքերը... նա իր կեանքում առաջին անգամն էր, որ ողորմութիւն էր իննդրում:

— Տօ, մարդ Աստուծոյ, ինչո՞ւ քաղցած ես,  
չես ամաչում. միթէ բազուկներ չունես, ինչո՞ւ  
շես աշխատում:

— Մըրազան, ամաչում եմ, բայց ինչ անհմ.  
տանը երեխաններս հաց են աղաղակում, հաց  
չկայ, իսկ ինքս հիւանդ եմ, աշխատել չեմ  
կարողանում...

— Սուտ ես խօսում, բազուկներդ քար կ'եփեն,  
— Սուտ շեմ խօսում:

— «Քո երեսի քրանքով հաց կեր», այսպէս  
է պատուիրում մեր Տէր Աստուածը:

— Այն, հաստատեց սըրազանի խօսքը հա-  
րուստ վաճառականը:

— Հապա դուք ինչո՞ւ չէք քը ք տնում, կա-  
մաց ասաց հայրս:

— Գասպար, զոնդիր սըրանց. օրուայ այս  
պահուն աղքատներ չեն լինի, — հրամայեց եպիս-  
կոպոսը իր ծառային: Մինչև վերջինի դալը  
մենք հեռացանք առաջնորդարանից:

Եկեղեցու մօտով անցնելիս հայրս տիսուր  
հայեցքով վերջին անգամ նայեց դէպի այն  
խաչը, որ փառաւոր կերպով կանգնեցրել էին  
զանգակատան վրայ... Խեղճ մարդ: Այդ տիսուր  
հայեցքով արդեօք նա աղօթում էր, թէ բողո-  
քում:

— Հայրիկ, միթէ այդ մարդիկ չեն խղճում  
մեղ, հարցը ես անմեղութեամբ:

— Անիծուեն դրանք... ինձ աղքատացնողը իմ  
խիղճը եղաւ: Բայց յօժար եմ այսպէս աղքատ,  
արհամարհուած լինել, քան անխիղճ և հարուստ:

— Հայրիկ, մըսում եմ, զնանք:

— Գնանք, պատասխանեց նա, աշքերի ար-  
տասուքը սըրելով...

## ՎԻ

— Մայրիկ, հայրիկն եկաւ. ասում էիր՝  
սպասէք. դէհ, վեր կաց, հաց տուր. — այս խօս-  
քերն ասացին քոյլերս, երբ մենք դատարկ  
ձեռքով ներս մտանք:

— Զուր ես գրիլ կրակին, հարցը եց հայրս  
մօրիցս:

— Դրել եմ, — պատասխանեց մայրս և աւե-  
լացրեց. — Ի՞նչ ես բերել, ի՞նչ պէտք է եփեմ:  
— Քար եփիր, սիրելիս, մարդկային խիղ-  
ճը քար աց ել է...

— Մայրիկ, դէհ, վեր կաց, եփիր, երե-  
խայական անմեղութեամբ գոչեցին քոյլերս:

Մայրս արձան էր կարուել:  
Հայրս կռացաւ, վառարանի կողքին ընկած

Քարի կտորն առաւ, նետեց եռող կաթսայի  
մէջ, իսկ ինքը պառկեց՝ գոչելով.

—Աղքատներ, անօդնականներ, քար եփե-  
ցէք, այդպէս են պատուիրում մեզ մեր հա-  
րուստները և հոգեոր հայրերը...

Այդ եղան նրա վերջին խօսքերը:

Գ

## ԳԵՂԵՑԻԿ ՇԱՀՆՍԵԻ ԲԱԼՈԾ

(Պարսկական դրոյց)

Խ

Սով տարի էր: Մի երեկոյ, երբ մութը  
կոխել էր գետինը, Ա. քաղաքի զահզագի այ-  
գում նստած էր մի պարսկուհի: Այդ երիտա-  
սարդ պարսկուհին զահնսէն էր, որի գեղեց-  
կութեամբ զմայուած էր ամբողջ քաղաքը:  
Զահնսէն նշանուած էր տեղական խանի որդի  
Մուստաֆի հետ և շուտով պիտի ամուսնանար.  
բայց այդպէս չեղաւ. շուտով վրայ հասաւ սո-  
վը, որ շատ ընտանիքների քայլայման պատ-  
ճառ դարձաւ...: Եւ որովհետեւ զահնսէի ծը-  
նողները ևս աղքատ էին, ուստի շկաբողացան  
իրանց մինուճար զաւակին ամուսնացնել: Նրա  
հայրը մեռել էր. իսկ մայրը՝ սովամահ չինելու

համար ամուսնացել էր մի ուրիշ մարդու հետ: Ամբողջ ընտանիքից մնացել էր միայն խեղճ զահնսէն, որ ուտելու հաց չունէր: Հարուստ հարեանները բնաւ ուշադրութիւն չէին զարձնում նրա վրայ, իսկ աղքատները միայն իրանց վրայ էին մտածում... Դառն հանգամանքներից ստիպուած՝ զահնսէն միքանի ամիս սկսել էր սրանից, նրանից ողորմութիւն խնդրել: Փողոցային սրիկանները կշամբում էին նրան ասելով՝ «բաւական է, թնդ հպարտութիւնդ, մեզ լսիր, որ մենք քեզ լաւ պահպանենք...»: «Ո՛չ, պատասխանում էր նա, ես չոր ու ցամաք հացով կ'ապրեմ, բայց իմ պատիւը ձեզ նմաններին չեմ ծախիլ...»:

Բայց կեանքը շուտով անտանելի թուաց զահնսէին, նա այլևս չկարողացաւ իր մէջ խեղդել անձնասիրական զգացմունքը, ուստի վճռեց վերջին անգամ տեսնուել իր ապագայ փեսացուի հետ: Դրա համար նա կանխօրէն իմաց էր տուել զահզաղի այգեպան Մուխտարին, որ նրա քեռին էր: Բարի Մուխտարը Մուստաֆին տեսնելով ասաց, որ գնայ զահզաղի այգին, ուր պիտի տեսնուի իր նշանածի—զահնսէի հետ: Ահա սրա համար էր զահնսէն զահզաղի այգին եկել:

—Ինչո՞ւ չի երևում այդ ծերուկը, ասաց նա և շղարշը, որի մէջ փաթաթուած էր, ե-

քեսի վըայից ետ քաշեց, որտեղից երեացին նրա երկու վառվուուն աշքերը, որոնք սիրոյ վառ զգացմունք էին արտայայտում: Յանկարծ թփերի միջից դուրս եկաւ Մուխտարը:

—Զահնսէն, դէպի հին «խաւլաթ-խանան»\*), ասաց Մուխտարը և հեռացաւ: Զահնսէն ծերունի այգեպանին հասկացաւ և գլխով նրան չորսհակալութիւն արաւ ու ճանապարհ ընկաւ դէպի «խաւլաթ-խանան»: Նա սրտաթրով և արագ քայլերով առաջ էր գնում: Ճանապարհին յանդիմանական, կծու խօսքեր էր պատրաստում, որ Մուստաֆի գլխին թափի:

Վերևի այգուց դուրս գալով նա մտաւ միջին այգին, ուր գտնվում էր հին «խաւլաթ-խանան»: Այս «խաւլաթ-խանան» և այգին, որ բաղկացած էր երեք մասից, տուածներում պատկանում էր Փիլ զահզաղին, որ մի զիշեր իր հարեմխանի կանանցից խեղզուեց:

Զահը, որին աղգակից էր զահզաղին, հրամայեց բոլոր կանանց՝ խեղզերու համար ծովը թափել, իսկ այգին ամբողջապէս յանձնուեց տեղական զաղիին, որ առանձին պատիւ ունէր

\* ) «Խաւլաթ-խանան»—նշանակում է գաղտնատուն: Այս տեսակ գաղտնատուններ գլխաւորապէս կառուցվում են Պարսկաստանի բաղնիքների մէջ:

Զահի մօտ: Այգին իր նախկին տիրոջ անուամբ կոչվում էր Զահզադի այգի: Զահնսէն հաղիւ թէ մօտեցել էր «խաւալթ-խանին», որտեղ թագնուած էր Մուստափան, որ վերջինս դուրս գալով իր թագնուած տեղից, մօտեցաւ Զահընսէին և երկու սիրահարները գրկախառնուեցին: Զահնսէն ետք քաշեց իր շղարշը, գրեց մի կողմը և իր սիրելիի առաջ ներկայացաւ որպէս մի հրեշտակ: Թէ անգութ սովն այդ գեղեցիկ արարածի վրայ ազգել էր և նա մաշուել էր, բայց և այնպէս՝ աւելի սպիտակացել, աւելի գեղեցկացել էր: Մուստափան տեսնելով իր սիրուհուն այդպիսի աննախանձելի վիճակի մէջ, խիզճը խայթեց նրան: Զահնսէն ասաց նրան.

—Դու, Մուստափա, անգութ ես:

Մուստափան ոչինչ չպատասխանեց:

— Մուստափա, ասաց Զահնսէն, միթէ քո երակներում արիւն չի հոսում. միթէ դու կենդանի մեռած ես...: Ո՞հ, մի նեղանար, որ քեզ կշամբում եմ. բայց արդեօք ես իրաւունք չունեմ այսպէս խօսելու: Այն, ունեմ. ես դռնէ դուռն ընկած ողորմութիւն եմ ժողովում, իսկ դու, անգութ, քո հօր պալատում քէֆեր ես անում...: Միթէ ես այնչափ ատելի եմ քեզ, մոռացուած քեզանից, որ ձեր այն առաւա, շռայլ սեղանի մի աման կերտկին էլ

արժան եմ...: Կամ ազատիր ինձ այս աննախանձելի դրութիւնիցս, կամ թէ՝ ինքս ինձ կ'աղատեմ. այս է իմ վճիռը:

Մուստափան համբի պէս լուռ էր. նա ոչինչ չէր խօսում. միայն մեքենայաբար նայում էր իր գեղեցիկ սիրուհուն, և երեակայելով, որ ապագայում ինքն այդ հրեշտակին իրան կը սեպհականէ, ուստի իր սրտի մէջ մի առանձին ինքնաբաւականութիւն էր զգում:

Նա սիրում էր Զահնսէին, այն, սիրում էր, միայն մի անտեղի արգելք նրան մտատանջութեան մէջ էր զցում. ահա այդ անտեղի արգելքըն էր պատճառը, որ նրա դէմքը մուայլուել, ալլայլուել էր:

Զահնսէն այդ նկատեց:

— Ինչո՞ւ շես խօսում, Մուստափա. Հինի՞ թէ իմ խօսքերը քեզ վիրաւորեցին:

— Ո՞չ, քո խօսքերն ինչո՞ւ պիտի ինձ վիրաւորեն, քանի որ զուտ ճշմարտութիւններ են պարունակում իրանց մէջ. ես յանցաւոր եմ քո առաջ, Զահնսէ. այն, յանցաւոր եմ, բայց, ի սէր Ալլահի և Մարգարէի, վրաս մի բարկանար, ուզում եմ սիրտ քո առջն բանալ:

— Ցիշո՞ւմ ես այն օրը—շարունակեց Մուստափան,—որ քո հանգուցեալ հօրը սկ հոդին յանձնեցինք. այն օրը հայրս ինձ խստիւ արգելեց, որ իմ տեսակցութիւնները դադարեցնեմքեղ հետ.

Երբ դրա պատճառն ուզեցի իմանալ, նա ասաց.

—Պարզ է, որ դու այսուհետև չպէտք է տուսնանաս նրա հետ:

—Ինչո՞ւ, հայր, չէ՞ որ ես և նա փոխաղարձաբար սիրում ենք իրաք. ինչ անենք որ աղքատ է:

—Ահա հէնց նրա այդ աղքատութեան պատճառով հրամայում եմ քեզ, որ այսուհետև չգնաս նրա մօտ, —ասաց հայրս. —ընտրիր քեզ համար մի ուրիշ աղջիկ, որ բարձր դասակարգից լինի, որ լաւ օժիտ բերի. ես պատրաստ եմ քեզ իսկոյն եեթ ամուսնացնել:

—Ահա բուն եղելութիւնը, սիրելի Շահնսէ, այժմ շգիտենմ ինչ անեմ...

—Մուստաֆա, սիրում ես ինձ առաջուայ պէս:

—Ալլահը վկայ, մեծ Մարգարէն վկայ, որ սիրում եմ:

—Եթէ սիրում ես, կարող ես աղատել ինձ:

—Այն, քո ազատութիւնը մեր փախուստ տալումն է կայանում. յօժմը ես, եթէ քեզ փախցնեմ:

—Այն, յօժար եմ, բայց ուր փախչենք. չէ՞ որ ամեն տեղ սովէ, մարդիկ իրաք միս են ուտում. մեզ մի կը պահպանէ:

—Այդ մասին ես կը հոգամ, անհնգ մնա:

—Ո՛չ, ոչ, —գոռալով ներս ընկաւ ծերունի Մուխթարը, —փախչել չէ հարկաւոր. դիմեցէք

Ղաղիին: Ալլահը վկայ, որ Ղաղին մի հատ է մեր ամբողջ մհալումը: Ա՛խ, որքան ողորմած, որքան գթասիրտ է նաև մեծ Մարգարէի փոխանորդը: Նա ձեր «քեաբինը» ձրիապէս կը տայ: —Հօրիցս եմ երկիւղ կըում, Մալիթար:

—Ե՞յ երիտասարդ, այդ ինչե՞լ ես մտածում: Ղաղին երբ ձեր «քեաբինը» տայ, ով կարող է ձեզ նեղացնել. չէ՞ որ քո հայրը տեղիս խանն է, որ նոյն Ղաղիից կախումն ունի: Միթէ քեզ յայտնի չէ, որ Ղաղիի ամեն մի խօսքը օրէնք է ուղղափառների համար. չէ՞ որ նա մեծ Մարգարէի փոխանորդն է: Ես կ'օգնեմ ձեզ:

—Ալլահը քո կենաց օրերն աւելացնի, որ մեզ այդ բարի խուրհուրդը տուիր, ասացին միարեցան երկու սիրահարները:

—Ռւրեմն գուք այսաեղ կը գիշերէք, ես ձեզ համար «շամ»\*) կ'ուղարկեմ, ասաց այգեպանն ու դուրս գնաց:

## xx

Առաւօտ էր. արեգակը դիռ նոր էր լուսագունել: Գեղեցիկ տեսարան էր ներկայացնում

\*) Զամ—երեկոյիան ճաշ, ընթրիք:

Զահղադի այգին, Կասպեան ծովի ափում: Նորաբաց վարդենու թփերը, կանաչ խոտերը՝ որպէս թաւիշ պէծին-պէծին տալով, այս ու այն կողմն էին ծածանվում: Թռչունները, որոնցով լիքն էր այգին, մէկ թփից միւսն էին ճախրում: Ծովը լուռ էր. ալիքները քրքջալով գալիս խփում էին այգու պարսպների ստորոտներին ու ետ դառնում: Պարխսպների ետևից՝ այգու կրղմից ընկած էին մի շարք շինութիւններ, որոնց մէջ գանվում էին թուռվ հինգ հատ բաղանիք, որոնք կառուցուած էին պարսկական ճաշակով: Այդ բաղանիքների իւրաքանչիւր դուան ճակատին նկարուած էին պարսկական նշաններ՝ արեգակը և առիւծը, որոնց հմուտ ճարտարապետի երեակայութիւնը այնպէս էր ստեղծագործել մարմարինի վրայ, որ մարդ նայելով չէր կըշտանում:

Այգու կենդրոնում գանվում էր պարսկական մզկիթը, որի գագաթը դալարապարդ ծառերի միջով դուրս էր եկած միքանի տասնեակ ստեն բարձրութեամբ:

Մզկիթի ամենավերջին ծայրին, մի ձողանման երկաթի վրայ գտնուած մի ինչ որ սպիտակ բանի վրայ նկարուած էր մեծ Մարգարէի Ալիի աջը, որ այս ու այն կողմն էր ծածանվում: Մօլլան առաւօտեան ազանն էր կանչում: Կրօնի ծիսակատարութիւնը Փանատիկոսու-

թեան հասցրած մոլիուանդ պարսիկները՝ մի-մի ջրաման ձեռքներին վազում էին դէպի ծովափը: Մզկիթին կից գտնվում էր Զահղադի պալատը, որ պակաս ճաշակով չէր կառուցուած: Այդ ամբողջ շինութիւնը կլոր ձեւ ունէր, ինչպէս բերդերի բուրգերը: Առաջին յարկում ապրում էին Զահղադի ֆերբէշները, երբորդում դիւժնական գործեր էին վճռվում, իսկ երրորդում՝ ապրում էր ինքը Զահղադէն: Այդ շինութիւններից ոչ-այնքան հեռու, աւելի ցածր դիրքով կառուցուած էին թռուվ վեց սենեակ, որոնց մէջ ապրում էին Զահղադի բազմաթիւ կանայք: Դա հարեմիանան էր: Արեգակի առաջին ճառագայթներն ընկել էին այդ շինութիւնների գագաթների վրայ, որոնք պատղում էին: Այդտեղ չկային միայն Փիլ-Զահղադէն և իր կանայք: Զահղադի տեղ նստած էր մի կրօնաւոր, այն է՝ Ղաղին, որ իր համար ընարել էր շինութեան երրորդ յարկը, որտեղ և ապրում էր: Հարեմիանան դատարկ չէր:

Ղաղին ևս շատ կանայք ունէր: Բաղանիքները նոյնպէս միշտ կենդանի էին պահվում: Դիւանսական գործերը նոյնպէս Ղաղին էր վըճռում և ինքը ժողովրդից պաշտպում էր որպէս սուրբ մարդ, մանաւանդ որ մեծ Մարգարէի փոխանորդն էր:

Այդ առաւօտեան Ղաղին բաղանիքից վերա-

դառնալով, նստեց դէպի ծովը դուրս բերուած պատշգամբի վրայ և հրամայեց, որ դալեան պատրաստեն: Ջառ շանցած վերադառաւ Մուխթարը և պարսկական դալեանը, որ դարդարուած էր ոսկեայ շղթաներով, զրեց Ղաղիի առաջ, իսկ ինքը ձեռները կրծքին՝ սպասում էր իր տիրոջ հրամանին: Ղաղին համ ծխում, համ բերկրանքով նայում էր ծովին, որի երեսին մակոյիներն այս ու տյն կողմն էին լողում:

«Ալլահ, օգնիր, որ բերանս բանամ», քթի տակ ասում էր Մուխթարը:

—Ռ' իմամների զադայի զաւակ, համարեագոռաց Մուխթարը:

Ղաղին զադարեցրեց ծխելը և դալեանի կոթը ձախ ձեռքն առնելով՝ դիմեց Մուխթարին:

—Ասա, ինչ է խնդիրդ, իմամների զադայի հաւատարիմ ծառայ:

Մուխթարն ամեն ինչ պատմեց և խնդրեց, որ այն երկու սիրահարների «քեարինը» ձրի տայ:

—Գեղեցիկ է աղջիկը, հարցրեց Ղաղին:

—Հաջի Ղուլամի աղջիկ ձահնսէն է:

—Համար... յիշեցի. գնա շուտով բեր, հրամայեց Ղաղին:

Մուխթարն ուրախ-ուրախ և շտապ քայլերով վագեց «խաւաթ-խանան»:

—Ձահնսէ, Մուստաֆա, շնոր արէք, այս բոպէին պիտի ներկայանաք Ղաղին:

Ձահնսէն, ինչպէս սովորութիւն է պարսից մէջ, երեսը բաց չէր կարող ներկայանալ մի պատռաւոր մարդու, որպիսին էր Ղաղին: Նա մի կերպ ծածկեց երեսը հին շղարշով և Մուստաֆի հետ ներկայացաւ Ղաղին, որ նրանց սիրով ընդունեց:

Ղաղին շատ էր աշխատում Ձահնսէի երեսը տեսնել, բայց այդ նրան չէր յաջողվում: Միայն ասում էր Ձահնսէի ալեխան արտասուքի հեկեղը, որ ասում էր.

—Ո՞վ մեծ Մարգարէի փոխանորդ, օգնիր:

—Կ'օգնեմ, աղջիկս, հանգիստ կացիր:

երկու սիրահարներն ընկան Ղաղիի ոտքերը և համբուրեցին նրա փէշերը, յայտնելով նրան իրանց շնորհակալութիւնը:

—Այս երեկոյեան ձեր «քեարինը» կը տամ և ձեղ, որպէս պատռաւոր հիւրերի, մի ամիս մօտս կը պահեմ, անհնգ մնացէք: Այժմ, դռն, Մուստաֆա, շարունակեց Ղաղին, կարող ես գնալ և քո հարսանեաց պատրաստութիւններով երեկոյեան վերադառնալ ինձ մօտ, իսկ Ձահնսէին թնդ այստեղ:

Մուստաֆան գլուխ տալով դուրս գնաց դէպի քաղաք:

## III

Մուստաֆայի գնալուց յետոյ Ղազին հրամայեց Մուլիթարին, որ ձահնսէին տանի Ղամար-Մուլիթանի սենեակը: Ղամար-Մուլիթանը Ղազիի առաջին գեղեցիկ կինն էր և մօտ ժամանակներում վախճանուել էր: Նրա հրամանն անմիջապէս կատարուեց:

Ձահնսէին տարան Ղամար-Մուլիթանի սենեակը, որտեղ եկաւ և Ղազին:

—Խեղճ աղջիկ, հագուստի ինչպէս հնացած է, —ասաց Ղազին Ձահնսէին, որ անշարժ կանգնած էր սենեակի մէջտեղում:

—Երեսդքաց, աղջիկս, ինձանից միքաշուիր, այսուհետեւ դու իմ զաւակն ես:

Ձահնսէն լսելով՝ «Իմ զաւակն ես» խօսքերը, վստահացաւ երեսը բանալու:

—Ա՞յս, ինչ սիրուն ես, աղջիկս:

Ձահնսէն լուս էր:

—Ո՛չ, ես քեզ ձեռնից չեմ թողնիլ, —շարունակեց Ղազին, —քեզ ինձ վրայ «Քեարին» կ'անեմ. յօժար ես:

—Ո՞վ մեծ Մարգարէի փոխանորդ, խղճավըսա, ինձ մի բաժանիր իմ Մուստաֆայից:

—Հա, հա, հա, Մուստաֆան ինչ է ինձ մօտ. Գանձ, պատիւ, հոչակ իմ մօտն է, թէ Մուստաֆի. խելքի եկ, աղջիկ, քո յօժար կամքով հեռացիր Մուստաֆից, թէ չէ ես կը հեռացնեմ՝ նրան բանտ նստեցնելով, իսկ քեզ ինձ կին առնելով:

—Խղճա ինձ, ով հայր..

—Ուրեմն չես յօժարում:

Ձահնսէն ընկաւ Ղազիի ոտները: Ղազին գրկեց գեղեցիկ ձահնսէին, որ լալիս, գոշում էր ասելով՝

—Իսէը Ալլահի, մեծ Մարգարէի, մի թշուառացնիր ինձ:

## IV

Արել խոնարհուել էր դէպի իր մուտքը: Արեգակի ծիրանագոյն ճառագայթների տակ ծովը պապում էր. փշում էր երեկոյեան մեղմ ու զոպսպում էր.

Դաղին դեռ փակուած էր իր սենեակում:  
Այդու արևմտեան կողմից մի երիտասարդ ու-  
ղում էր ներս մտնել,

Երկու զինուած ֆէրբէշներ նրան արգելե-  
ցին:

—Թողէք, ձեղ ասում եմ, գոռաց Մուստա-  
ֆան, որ գալիս էր «Քեաքինը» ստանալու:

—Ենք թողնիլ:

—Ախար Դաղիի մօտն եմ զնում:

—Մենք այդ գիտենք և հէնց զրա համար  
թոյլ չենք տալիս:

—Ինչո՞ւ:

—Այնպէս, Դաղին մեղ հրամայել է, որ քեզ  
այստեղից վռնդենք:

—Կորէք, անիծուածներ...

Դեռ խօսքը չէր վերջացրել խեղճ Մուստա-  
ֆան, որ ֆէրբէշները բռնեցի նրան և ծեծելով  
տարան դէպի բանտ:

—○ 8<01> 8○○—

## ¶

## ԴԱՏԱՍԱՆ

(Պարսկահայերի կեանքից)

## ¤

Գեռ նոր էր մայր-մտնող արկը իր ետե-  
ւից թողած ծիրանագոյն շառաւիղներով ներ-  
կել երկինքը: Հիանալի տեսարան էր ներկայա-  
ցնում այդ միջոցին Կասպեան ծովը: Նա  
մեղմօրէն զարկվում էր իր աւազոտ ափերին:  
Ծովի երեսին կարծես աղամանդի կտորներ  
էին շաղ տուել, այնպէս էր ծովը պսպղում,  
մարդու աշք շլացնում: Հեռուից, շատ հե-  
ռուից ալիքներն իրար վրայ անցնելով դէպի  
ափն էին վաղում, ճանապարհին իրար հետ  
գրկվում, համբուրգում, իրար եակից վաղե-  
լով՝ գալիս խփում էին ափին և քրքջալով  
կրկին ետ դառնում նոր ափ եկող ալիքների  
հետ ևս զրկվում, համբուրգում, նորից դէպի

ափ վազում: Ալիքների իրար շփուելուց ծովը  
մեղմ շշունջ էր հանում:

Ծովի երեսին, տեղ-տեղ, աստղերի մեծու-  
թեամբ լոյս էր երևում. դրանք շոգենաւեր  
էին, որոնք նորահարսի պէս զարդարուած,  
զուգուած՝ այս ու այն կողմն էին լողում: Այդ  
ժամին Ա... ծովեղերեայ քաղաքի բնակիչները  
զրօսատեղերից նոր էին տուն վերադառնում:  
Հահզարի այգում գտնուած Սաֆի-Ղուլի-խանի  
հարեմխանի լապտերները վառուած էին: Հա-  
րեմխանի կանայք զուգուած-զարդարուած՝ այ-  
գի էին գուրս եկել և իրանց վակուած կեան-  
քից միայն երեկոներն ազատ լինելով խաղում,  
պարում էին. իսկ ինքը, Սաֆի-Ղուլի-խանը  
բերկրանքով նայում էր իր գեղեցկուհիներին,  
որոնցից իւրաքանչիւրն աշխատում էր իր նա-  
զելի պարով խանի ուշադրութիւնն իր վրայ  
դարձնել...

Խանը մեքենայարար նայում էր իր գե-  
ղեցկուհիներին, որոնցից մէկին գովում, միւ-  
սին կշտամբում էր՝ իրանց բռնած պարերի  
առիթով: Իսկ խանի ծառան՝ ծերունի Մուս-  
տաֆան, խանից փոքր ինչ հեռու կանգնած՝  
ձեռները կրծքին, սպասում էր իր տիրոջ հը-  
րամանին: Խանը նստած տեղից վեր կացաւ և  
սկսեց յետ ու առաջ քայլել պատշաճմբի վրայ:  
—Ո՞չ, անկարելի է որ «նա» իմ կանանո-

ցում չկինի, յանկարծ բացականչեց խանը և  
մտաւ իր առանձնասենեակը: Մուստաֆան  
յետեց իր տիրոջ մինչև առանձնասենեակի  
դուռը, որտեղ և կանգ առաւ:

—Մուստաֆա, ներս մտիր, հրամայեց խանը:  
Ծերունի ծառան ներս մտաւ:

—Մուստաֆա, այսպէս սկսեց խանը, շկար-  
ծես թէ ամբողջ իրանի կանանցներում իմ  
կանանցի գեղեցկուհիների նմանը կարող ես  
գտնել.—ո՛չ, այդ անարելի է, եթէ նոյնիսկ  
ճրագով ման գալու լինիս: Բայց երէկ ծովա-  
փում զրօսնելիս, Մուստաֆա, շարունակեց խա-  
նը, ինձ մի հայուհի պատահեց, որի գեղեց-  
կութեամբ ես այժմ էլ յափշտակուած եմ:  
Կութեամբ ես այժմ էլ յափշտակուած եմ:  
Մուստաֆա, ինչ գեղեցկուհի... Անիծուածի  
շագանակագոյն մազերի երկու հատ ծամերն ի-  
շել էին մինչև ոտները, աշքերը խոշոր, սկ-սկ...  
ո՞ր մէկն ասեմ... Ալահի և մեծ Մարգարէի  
ո՞ր մէկն ասեմ... Ալահի և մեծ Մարգարէի  
օգնութեամբ երբ նրան կը բերեմ իմ կանա-  
նոցը, գու էլ կը տեսնես նրա սքանչելի գե-  
ղեցկութիւնը: Այժմ գիտես ինչ կայ, սիրելի  
Մուստաֆա, խօսքը առաջ տարաւ խանը, ես  
դադանի կերպով Թէաճիր-բաշի Սարգսից ի-  
գաղանի կերպով Թէաճիր-բաշի Սարգսից ի-  
գաղանի կերպով Թէաճիր-բաշի Սարգսից ի-  
գաղանի կերպով Թէաճիր-բաշի Սարգսից ի-

բոջ համար, որի համար, հաւատացնում եմ,  
Մուստաֆա, առաօրէն ինձանից կը վարձա-  
տրուես... Այժմ, ասա, կարող ես այդ գործը  
գլուխ բերել:

Այդպիսի գործերում փորձուած ծերունի  
ծառան իսկոյն պատասխան չտուալ իր տի-  
րոջ: Նա, իբր թէ մտածելով, կորագլուխ՝  
սենեակի յատակին էր նայում: Միքանի ըստէ  
այդ գրութեան մէջ մնալով՝ յանկարծ նա  
զլուխը վեր բարձրացրեց և դէմքին լուրջ  
կերպարանք աւալով՝ զիմեց խանին.

—Ողորմած տէր, այդ ի՞նչ գեղեցկուհի է,  
որ Քէյրան-խանումիցն էլ անց է:

—Երդում եմ մեծ Մարգարէի անունով,  
որ նրա նման սիրուն կին զեռ չեմ տեսած,  
միայն կարելի է ասել, որ նրան վոզը իշաաէ  
կարելի է նմանեցնել Սոնա-խանումին, որ ան-  
ցեալ տարի իրան ծովը նետեց:

—Սոնա-խանումը, այն, նա շատ սիրուն և  
խելօք կին էր, բայց ափսոս որ հայուհի էր:

—Այդ հայուհիները հէնց այդպէս գիտ են  
լինում, պատասխանեց խանը:

—Ողորմած տէր, էլ ինչո՞ւ մի գիտ էլ բե-  
տինք, որ իրան ծովը նետի, նկատեց Մուս-  
տաֆան:

—Ո՛չ, նա չի կարող իրան ծովը նետել, ես  
նրան բուլըուի պէս եմ պահելու:

—Ես պատրաստ եմ ձեր հրամանը կատա-  
րել, ողորմած տէր, միայն ձեզ մնում է այդ  
մասին միքանի անհրաժեշտ կարգադրութիւն-  
ներ անել:

—Ի՞նչ կարգադրութիւններ:

—Այն, պէտք է, որ ինձ հետ միքանի քաջ  
տղամարդիկ լինին, որոնք ծովի բնութեան  
հետ փոքրիշատէ ծանօթ են, որ գործ տես-  
նենք:

—Վերցրն մեր ծառաներից հինգ հոգի:

—Հինգ հոգի միայն:

—Այն:

—Հինգ հոգով մենք ոչինչ չենք կարող  
անել:

—Ինչո՞ւ:

—Ողորմած տէր, չէ որ այդ հայերն էլ  
մարդ են, և այն էլ ի՞նչ տեսակ մարդ, երբ  
գործը պատուի զգացմունքին է վերաբերում...:  
Ուրեմն անհրաժեշտ է, որ ինձ հետ ամենա-  
քիշը տասը ֆէրբէշներ լինին:

—Վերցրն էլ աւելի, ի՞նչ վնաս:

—Ուրեմն թ՞ող իմ ամենաողորմած տէրն  
առաւօտեան դեռ աքաղաղները շկանչած՝ բա-  
րեհածի լողունել իր խոնարհ ծառայի որսը:

—Կըսպասեմ անհամբեր որոշած ժամանա-  
կիդ. ուրեմն թ՞ող Սլլահը և մեծ Մարգարէն  
իրանց օգնութեան աջը մեկնեն քեզ, որ դու՝

Հաւատարիմ Մուստափա, իմ ցանկացածը կատարես, ասաց խանը:  
ծերունի ծառան խանին գլուխ տալով՝  
դուրս գնաց:

## xx

Կէս գիշեր էր, Կասպեան ծովը հաղիւ շը-  
շընջալով շարժում էր իր ալիքները, որոնք  
լուսնի կաթնանման լոյսի տակ պսպղում էին  
որպէս արծաթ: Ա... քաղաքի բնակիչներն ար-  
դէն քնած էին. մերթ ընդ մերթ լսվում էր  
պարսիկ գիշերապահների ձայնը, որ գոռուս  
էր՝ «Եա-Ալլի...»: Ծովափին մի ետ ընկած տե-  
ղում զանուած մի գետնափոր խրճիթի ճրա-  
գը գեռ վառվում էր. նա իր ազօտ լուսով լու-  
սաւորում էր խրճիթը, ուր մի երիտասարդ  
կին նստած՝ սպիտակեղին հագուստներ էր  
լուսնում: Խրճիթի մէջ, գետնի վրայ փռուած  
էր մի հնամաշ անկողին, որի մէջ պառկած  
էին երիտասարդ կնոջ երեք մատաղահաս երե-  
խաները: Թամարը, այդպէս էր կոչվում կինը,  
Ա... քաղաքում, լուացարարութեամբ էր պա-

րապում: Նա գիշերը ցերեկ անելով հաղիւ կա-  
րողանում էր իր զաւակների օրական պարէնը  
հայթայթել:

Ծհա վեց տարի էր, որ նրա ամուսինը՝  
Գրիգորը, պանդխտութեան էր գիմել և այդ-  
քան ժամանակամիջոցում կինն ամուսնուց ոչ  
նամակ, ոչ որևէ լուր էր ստացել: Վերջին օ-  
րերը միայն Թամարը մի նամակ ստացաւ Գրի-  
գորից, ուր յայտնում էր, թէ մինչև մի շաբաթ-  
առուն կը վերադառնայ: Ի՞նչպիսի ուրախութիւն  
էր այդ շարքաշ կեանքի մատնուած, անտէր  
թողած կնոջ համար, որ ամուսնուց վաղուց  
արդէն յոյսը կտրել էր: Այժմ էլ, երբ ամբողջ  
ազգույթը աշխատանքից նրա մէջքը ծռուել, ցա-  
ւում էր, երբ մատները խաշուելուց մժմժում  
էր համակուսած և այդ ըոպէին նա մո-  
յոյսերով էր համակուսած և այդ ըոպէին նա մո-  
յոյսերով էր իր երկարամեայ անընդհատ տան-  
ուացած էր իր երկարամեայ անընդհատ տան-  
ուացած մինչև իսկ երջանիկ էր զգում ի-  
ջանքները, մինչև իսկ երջանիկ էր զգում ի-  
ջանքները: Մինչ ժամանակից յետոյ դուռը բաղ-  
լուսուեց. միքիշ ժամանակից յետոյ դուռը բաղ-  
լուսուեց. Թամարը միաժամանակ թէ վախեցաւ  
խեցին: Թամարը միաժամանակ թէ վախեցաւ  
խեցին: Վախեցաւ՝ որովհետև նա կարծեց, թէ եկո-  
ուրախացաւ՝ որովհետև նա կարծեց, թէ եկո-  
ուրախացաւ՝ որովհետև նա կարծեց էր... Վերջին մաքից դըր-  
դը գուցէ Գրիգորն է...: Վերջին մաքից դըր-

դուած, նա խելագարի պէս ուզեց վաղել, որ  
դուռը բանայ, երբ յանկարծ սարսափած կանգ  
առաւ:

—Դուռը բաց, գուացին դրսից:

Թամարը տեսաւ, որ եկողները ուրիշ մար-  
դիկ են և հայերէն չեն կանչում:

—Ո՞վ էք, հաղիւ կարողացաւ ձայն հանել:

—Մենք ենք, բաց, միաբերան գուցին  
պարսիկ փէրրէշները:

—Ախը գուք ո՞վ էք, ինչ էք ուզում ինձանից:

—Ասում ենք՝ բաց, բաց. քեզ ինչ թէ մենք  
ով ենք, սպառնալից ձայնով ասացին ֆէրրէշ-  
ները:

Թամարն ամբողջ մարմնով սկսեց դողալ.  
աեղիցն անգամ շշարժուեց. կարծես քարացել էր:

—Բաց արա, քեզ ասում են, —կրկնն լըս-  
ուեց պարսիկների կատաղի ձայնը: Դրա հետ  
միասին լսուեց սասափիկ հարուած դուն վը-  
րայ...: Դուռը կըունկի վըրայ ճրճուալով բաց-  
ուեց և տոս ֆէրրէշներ ներս թափուեցին:  
Թամարի յանկարծ բարձրացրած աղաղակի վը-  
րայ երեխաները զարթեցին և լեղապատառ  
սկսեցին աղիողորմ կերպով գոռալ:

—Հանգստացրէք այդ «լակոտներին», հրա-  
մայեց մի ծերունի, որի արտաքին տեսքը վը-  
կայում էր, թէ նրա խիղճը մեռած է, որ նա  
զագանաբարոյ է...:

—Ո՞հ, ինձ սպանեցէք, ինձ կտոր-կտոր  
արէք, միայն երեխաներիս ձեռը միք տալ...:

—Մենք քեզ չենք սպանելու, «գէօղալ»,  
հանգիստ կաց, ասաց նոյն ծերունին և գրկեց  
Թամարի իրանը: Իսկ մէկ ուրիշը սուրը մեր-  
կացրած անկողնի մէջ սկսեց մովթել երեխա-  
ներին...:

Զարհուրեկլի՛ տեսարան էր այդ. մայրը ճը-  
շում էր, ուզում էր դուրս պլծնել ծերունու  
գրկեց, որ իր զաւակներին օգնութեան հաս-  
նէ, բայց նրա աշխատանքն իզուր էր անց-  
նում...:

—Փիլ-աղա, վերջացըլի՛:

—Մուստափա, այս փոքըիկ աղջկան չեմ  
ուզում սպանել:

—Ինչու:

—Գեղեցիկ է, շատ գեղեցիկ...:

—Հանգստացրն շուտով:

Սհագին վիթխարի սուրը դիպաւ փոքըիկ  
աղջկայ պարսոցին, որ միքանի ըոպէ մի-  
այն այս ու այն կողմը թաւալեց և անշարժ  
մնաց:

—Տանը ինչ որ կար վեր տուաք:

—Այն:

—Դէ, այդ «լակոտների» դիակները տարէք  
մակոյկի մէջ դրէք:

Երեխաների դիակներից յետոյ երկու ուժեղ

բազուկներ դուրս տարան ուշաթափ թամարին:  
 Նոյսը նոր էր բացվում: Քնած բնութիւնը  
 քիշ-քիչ զարթնում էր: Հեռուն, շատ հեռուն,  
 այնտեղ, ուր ծովը միացած էր երկնքի հետ,  
 երկնքի լայն մասը կարմրել և կարծես կրակի  
 մի խարոյի էր վառուած՝ որ անխնայաբար լա-  
 փում էր արեելքը: Աքաղաղներն առաւօտեան  
 լուսաբացն էին աւետում: Զինորսները քաշուել՝  
 ափն էին դուրս եկել. նաւերն արդէն ճանա-  
 պարհուած էին: Ա... քաղաքի արհեստաւոր դա-  
 սակարգը զարթնել և խանութներում ճրագի  
 լուսով աշխատում էր: Մօլլան բարձրացած  
 մզկիթի գլուխը, այնտեղից առաւօտեան ա-  
 պանն էր կանչում: Այդ ժամին մի մակոյկ ծո-  
 վի վրայ այս ու այն կողմն էր լողում: Վեց  
 ուժեղ բազուկներ մակոյկն այս ու այն կողմն  
 էին տանում, բայց ոչ մի տեղ մակոյկը կանգ  
 չէր առնում: Վերջապէս գետաբերանը մտնե-  
 լով մակոյկը կանգ առաւ:

— Ուստու, դէ այժմ այդ «լակոտների» դի-  
 մակները ծնվը զցիր:

— Մուստաֆա, բաս ջուրն ափ շի դուրս  
 բերիլ:

— Գցիր, քեզ ասում եմ. բաս չես տես-  
 նում, որ ջուրը դէպի ծովն է զնում. զցիր,  
 դրանց դիակները ով գիտէ որ աշխարհում ափ  
 դուրս կը գան:

Միքանի ծանը բաներ ծովը թափուեցին:  
 Դրանք երեխաների դիակներն էին անկողնու  
 մէջ փաթաթուած: Անկողինն էլ հետներն էին  
 վեցըրել, որպէսզի արեան հետքերը ծածկեն:  
 Մակոյկի ընթացքն այնուհետև դէպի ափն  
 ուղղուեց: Կէս ժամից յետոյ խանի ապարան-  
 քում աշխատում էին ուշքի բերել թամարին:  
 Խանն ինքն էր նստած նրա կողքին և շուտ-  
 շուտ ձեռքը դնում էր նրա կրծքին: Խանի ու-  
 շաբախութեանը չափ ու սահման չկար, երբ գե-  
 ղեցիկ կինը աշքերը բաց արաւ և անմիտ  
 հայեացքով սկսեց նայել իր շուրջը...

## XXX

Այս դէպքից անցել էր ուղիղ մի շաբաթ:  
 Մի կիրակի առաւօտ Ա... քաղաքում մեծ ի-  
 րարանցում կար: Թէ հայ, թէ պարսիկ բոլորը  
 հաւաքուել էին Կէօմրուք-խանան \*):

\*) Ճկոմրուք-խանան նշանակում է մաքսատուն  
 Պարսկաստանի գաւառական քաղաքներում սովորութիւն  
 է մաքսատներում զատական գործեր վճռել: Եյսպէս էր  
 Ա... քաղաքում:

Խուռն բազմութիւնն անհամրեր սպասում էր տեղական դատաւորին—հեաքիմին և դադուն, որոնց յայտաբարութեամբ ժողովուրդը հաւաքուել էր Կէօմրուք-խանան։ Մի քառորդ ժամից յետոյ հեաքիմն ու դագին միքանի մօլլաների, սէիդների հետ եկան։ բազմութիւնը նրանց տեղ տուաւ։ Նրանք գնացին և իրանց համար առաջուց պատրաստած սենեակում բազմեցին։ Միքանի ըռպէ լուռութիւն պահպաներոց յետոյ, դագին դիմեց ամբոխին։

—Գրիգոր Կուզիկեանը, որ գանգատուել է Սաֆի-Ղուլի-խանից, թնդ առաջ գայ։

Բազմութիւնը ճեղքելով՝ առաջ եկաւ մի քսանութամեայ հայ երիտասարդ։

—Կանգնիր այստեղ, ասաց Փէրքէշ-բաշի Սմայիլը, նրան կանգներու տեղ ցոյց տալով։  
Գրիգորը հնազանդուեց նրան։

—Պ. Գրիգոր, ասա, տեսնեմ։ դու ինչո՞ւ ես գանգատուել Սաֆի-Ղուլի-խանից, որ մի բարի, առաքինի մարդ է։ այս կարող են վկայել մեր նահանգի ուղղափառները։

—Ես ձեր «բարի» և «առաքինի» խանից դանգատվում եմ, որ նա իմ կնոջն ու մատադահաս երեխաներիս բռնութեամբ տարել և կրօնափոխ է արել։

—Վկայ ունիս, որ խանը քո կնոջը բըռնութեամբ է տարել։

—Այստեղ ինչ վկայութիւն է հարկաւոր, քանի որ հաստատ է, թէ խանի ֆէրքէները մի գիշեր կնոջս ու երեխաներիս բռնութեամբ տարել են խանի մօտ։

—Ո՞վ էր այդ տեսնողը. չէ՞ որ դու երէկ եռ եկել, մինչդեռ այդ դէպքը մի շաբաթ առաջ է պատահել։

—Վկայ ունիմ։

—Մուսուլման է, թէ՞ հայ։

—Հայ է։

—Որեմն քո գանգատն ապօրինի է։ Ճառիաթը գեաւաւըների համար գեաւուր վկայ չի ընդունում։ Բայց ես քեզ մի լաւութիւն կարող եմ անել, այդ էլ այն նպատակով, որ ձեր հայերը և դու միամտանաք և շասէք թէ՝ հայունին բռնութեամբ է կրօնափոխ եղել։ Ես այս ըռպէիս կանչել կը տամ քո կնոջը, տեսնենք նա ինչ է ասում, —ասաց դագին և Փէրքէշ-բաշի Սմայիլին հրամայեց, որ գնայ պարսկացած հայունուն բերի։ Խսկոյն Փէրքէշ-բաշին վագեց Զահղաղի այգին և զլուխն ու երեսը ծածկած մի կին ներս բերաւ Կէօմրուք-խան։ Դագին դիմեց այդ կնոջ։

—Քնյը, դու քո յօժար կամքովն ես կրօնափոխ եղել։


Երեսը ծածկած կինը զլխով նշան արաւ, որ ինքը իր յօժար կամքովն է կրօնափոխ եղել։

—Դէ, ցըուեցէք, գոռաց ֆէրբէշ-բաշին:

Թամար, իր աչքերին չհաւասալով՝ սալ-սափած և յուսահատութեամբ միայն այդ մի բառն աղաղակեց Գրիգորը: Նրան թուաց, թէ ամբողջ երկինքը շուռ եկաւ իր գլխին...

Գրիգոր, տեսալի, որ անիծուածն այս բազմութեան առաջ գլխով նշան արաւ, թէ ինքն իր յօժար կամքովն է կրօնափոխ եղել...: Վեր կաց, վեր կաց, անիծուած լինի նըա մօր կաթը, որ մեզ այսպէս խայտառակեց, գետնի տակը գրեց, պըծաւ,—Գրիգորի թեկից բռնելով ասաց հօրեղբայր Մինասը և նրան դուրս տարաւ Կէօմըուք-խանայից:

Ներս բերած կինը ոչ թէ Թամարն էր, այլ մի պարսկուհի, որ առաջուց պատրաստուած էր՝ սուտ վկայութիւն տալու Թամարի փոխարէն:



## Ե

## ԶԵՅՐԱՆ

(Աւանդութիւն)

## Ճ

—Իւսուփ, միթէ սա պատիւ է բերում Պարսից ինքնակալ և լիազօր խանին: Երբ բազմեցի այս իշխանական աթոռի վրայ (խանը ձեռքով ցոյց տուաւ աթոռը, որի վրայ նըստած էր ինքը), այն օրից սկսած մի այնպիսի սարսափ եմ տարածել մեր դրացի իշխանների և աւագակաբարոյ ցեղերի վրայ, որոնք ոչ թէ չեն համարձակվում ոտք դնել իմ հողի վրայ, այլ մինչև անդամ չեն համարձակվում իմ հպատակ ուղղափառների խօսքը գետին գըցել: Բայց այսօք, ինչպէս լսում եմ իմ որդի Ռամազանից, մեղնից ոչ հեռու, Ղափան գետի ձախակողմնան ափում կան միքանի անիրաւ հայեր, որոնք երկշոտութեամբ բարձրացել են

ամուր լեռների մէջ բնակութիւն հաստատել,  
մտադիր են ապստամբութեան դրօշակ բարձրա-  
ցնել Պարսից լիազօր խանի դէմ...

—Ո՞վ...

—Էսիր, Խւսնափ, գեռ խօսքս չեմ վերջա-  
ցրել, ինձ լսիր,—շարունակեց Ալիխակար խա-  
նը:—Եւ այդ երկշոտ հայերը կարծում են, թէ  
այն ամբապինդ լեռների մէջ կարող են իրանք  
պատապարուել: Ի՞նչպիսի ցնորդներ: Երեք  
չեն ուղում գիտենալ, որ Պարսից ինքնակալ  
խանը, երբ իր կտրիճներին հրամայէ զէնք  
առնելու, ոչ թէ ամուր լեռներ, այլ նոյնիսկ  
բնութիւնից ստեղծուած ժայռերը կը խոնար-  
հուեն նրանց սրերի առաջ: Իմ առաջ գլուխ են  
խոնարհել այնպիսի հերոսներ, որոնք իրանց  
կեանքում գեռ ոչ մէկից չէին յաղթուած: Նոյն-  
իսկ զարմանալին այն է, թէ այն քաջերի վայր  
գցած սրերն ովքեր են համարձակվում վերցնե-  
լու.—միքանի երկշոտ ու յիմար հայեր, որոնց  
կանանցով իմ կանանցոց լիքն է: Երբ մտածում  
եմ այդ անխեկքների արարմունքի վրայ, շատ եմ  
ծիծաղում...: Ո՞վ անպիտանիներ, եթէ դուք քաջ  
մարդ էք, զգացմունքի տէր էք, ապա ինչո՞ւ  
չէք պաշտպան կանգնում ձեր կանանց, որոնց  
գերել եմ ու ստրկացրել: Այն ժամանակ ուր  
էիք կորել, որ ժայռի ետեւումն էիք թագնուել:  
Իսկ այսօր մի գիտ և այլի կնոջ խելքով ուղում

էք հազարաւոր արիւն թափել իզուր տեղը: Ե-  
րկի ուղում էք իմ կանանց և ստրուկների թի-  
ւը բազմացնէք: Այն, այլպէս է. բայց չկարծէք,  
թէ միքանի կին, կամ տղամարդ գերի վեր-  
ցնելով՝ որոնք մինչև իրանց մահը պէտք է ինձ  
ստրուկի պէս ծառայեն, ձեզանից պէտք է  
ձեռք վերցնեմ: Ո՞չ. այս անգամ ստիպ-  
ուած եմ ձեզ հետ ուրիշ կերպ վարուել:  
Պիտի յարձակուեմ և այդ Չ... զիւղը տակն ու  
վրայ անեմ, որտեղ դուք միշտ սովոր էք ա-  
պստամբութեան ծրագիր կազմել Պարսից խա-  
նի դէմ: Դու՝ Զէլրան-խանում, պիղծ հայ-  
ուհի, —գոռալով ոտի կանգնեց խանը և սկսեց  
սենեակում ետ ու առաջ քայլել, —ի՞նչպէս ես  
համարձակուել ասելու, որ խանը բռնակալ է:  
Բոնակալ եմ ես հա. սպասիր: Ես հէնց  
վաղը ցոյց կը տամ քեզ ասած խօսքերիդ նշա-  
նակութիւնը:

—Խւսուփ, զիմեց խանը Կիլաքների \*) ցե-  
ղապետին, որ միշտ խանին օգնում էք պա-  
տերազմական գործերում, —քեզ այսպէս ան-  
ժամանակ, վաղ կանչել եմ յատուկ նրա հա-  
մար, որ իմ զօրքերի ամենալնտիր կտրիճնե-  
րից երկու հարիւր հոգուց բաղկացած մի խումբ  
պատրաստես, որոնք այս զիշեր պիտի յարձա-

\*) Արեաց մի ցեղն են կազմում Կիլաքները

կում գործեն Ղափանին տիրապետող Զէյրան-խանումի վրայ, որ այս մօտեքում ուզում է ապստամբութեան դրօշակ բարձրացնել մեր դէմ:

—Թո՛ղ ներուի ձեր խոնարհ ծառային, որ խնդրում է ձերդ բարձրութիւնից այս գիշեր յարձակում չգործել, ասաց իւսութը:

—Ինչո՞ւ, գոռաց խանը:

—Կան միքանի արգելառիթ հանգամանք-ներ:

—Ո՛չ, աՆ, իւսութի, ես սպասել չեմ կարտղ. ես ոչ մի արգելառիթ հանգամանքի մասին ուշինչ չեմ ուզում լսել: Գնա արա, ինչ որ ես քեզ հրամայեցի:

—Պատրաստ եմ խանիս հրամանը կատա-րելու, —պարսկին յատուկ խոնարհութեամբ ա-սաց իւսութին ու խանին գլուխ տալով դուքս գնաց:

## xx

Քարնանային պարզ գիշեր էր: Ղափանի գետը, որ շատ աղետալի դէպքերի էր ականա-տես եղած, վաշ-վի, վաշ-վի՛ ձայներով՝ խան-

գարում էր տիրած խորին լոռութիւնը և ահա-գին լեռների կրծքին դարկուելով՝ վազում էր դէպի Մայր-Արաքս: Նրա աջ ու ձախ ափե-րում ընկած խիտ անտառի գալարազարդ ծա-ռերի ճիւղերը մեղմ զեփիւռից շարժուելով՝ հազիւ լսելի կերպով ձայն էին հանում: Լու-սինն իր լոյսը սփռել էր գետի վրայ, լիռնե-րի գագաթներին: Ցեղատեղ, սիզաւէտ մարդա-գետիններում, աշքի էին ընկնում հոգուական վրաններ, որոնց առաջ, գալարազարդ գետնի վրայ, որոնձալով հանգիստ էր առնում հօտը: Վերջինից փոքր-փնչ հեռու հովիւների ահա-գին գամփոները, այդ հաւատարիմ պահա-պանները, շրջապատած հօտի չորս կողմը, հսկում էին նրան: Խոկ հովիւները ոմանք վրաններում, ոմանք բացօթեայ նորաբողոջ գալար խոտերի վրայ պառկած անոյշ մրա-փում էին:

Այդ ժամին Ղափանի գետի աջակողմեան ափին գանուող Տանձաթափ կոշուած մարդա-գետնի միջով երկու հարիւր հոգուց բազկա-ցած մի զրահաւորուած խումբ շտապով անց-նում էր գետի միւս ափը: Հովիւների գամփոն-ները սկսեցին հաջալ խմբի վրայ. բայց երբ խուռմը գետից բաւական հեռանալով ան-յայտացաւ խիտ անտառի մէջ, նրանք դադա-րեցին հաջալուց: Խուռմը վերջապէս կանգ-

առաւ զ... հայաբնակ գիւղի մօտ գտնուող  
փոքրիկ անտառում:

—իւսուֆ, տեսնում ես մեր դիմացը գլու-  
նուող տունը, որի ճրագները դեռ չեն մարած,  
— փսխաց իւսուֆի ականջին Ալիաֆկարը:  
— Այն, տեսնում եմ:

— Հէնց այդ է Զէյրան-խանումի տունը:  
Լսիր, իւսուֆ,—շարունակեց խանը. մեծ զգու-  
շութիւն է հարկաւոր, որպէսզի գեաւուրները  
մեր տեղը չնկատեն. զբա համար զօրախումբը  
չորս համահաւասար մասների պիտի բաժանենք,  
այնպէս որ կարելի լինի գիւղը չորս կողմից շըր-  
ջապատել: Այստեղից երբ նշան տամ, կը  
սկսէք ձեր հրացաններն արձակել, ի հարկէ  
գլխաւորապէս Զէյրան-խանումի տան վրայ:  
Գիւղացիների մէջ երբ իրարանցումն ընկնի,  
մենք ժամանակ կ'ունենանք գիւղին մօտենա-  
լու. երբ գիւղին բոլորովին մօտենանք, կը կին  
կը սկսենք մեր հրացաններն արձակել. Այս  
անգամ գիւղացիների մէջ անշուշա շփոթու-  
թիւն պիտի ընկնի, այն ժամանակ մենք իս-  
կոյն ևեթ կը յարձակուենք գիւղի վրայ: Ու-  
րեմն այլևս մի սպասիր, ժամանակ է կոր-  
չում. զօրքի երեք մասն առ և գնա, և ինչ-  
պէս պատուիրել եմ այնպէս արա:

Համեմատաբար շատ կարճ ժամանակում  
խանի հրամանը կատարուած էր և պարսիկնե-

ըլ շբջապատելով զ... գիւղը, պատրաստի  
սպասում էին խանին, որ նշան պիտի տար  
հրացաններն արձակելու: Խանն արձակեց դա-  
րաբինան. դա յարձակումն սկսելու նշանն էր:  
Ղարաբինայի ձայնի վրայ մի ակնթարթում  
բոլոր հրացանները ճայթեցին: Գիւղի մէջ սար-  
սափ ընկաւ, իսկ ամենից շատ և ամենից  
մեծ աղմուկ բարձրացրին շները:

Զէյրանը, որ Ղափանի անուանի մարդկանց  
հետ տաք-տաք խօսում ու վիճում էր զանազան  
խնդիրների առիթով՝ ամեն ինչ հասկացաւ:

—Մատնուած ենք, կանչեց նա, —ճրագները  
մարեցէք:

Մի ակնթարթում նա ներս վաղեց հարե-  
ւան սենեսալը և մի ինչ-որ բան վերցրեց և  
շապառվ խրեց գօտու մէջ:

Նրա հրամանի համաձայն ճրագները մա-  
րեցին: Սակայն դա ոչինչ օգուտ չբերաւ. պար-  
սիկներն արդէն բաւականին մօտեցել էին գիւ-  
ղին և շարունակ հրացան էին արձակում գիւղի  
վրայ: Գիւղացիների մէջ իրարանցումը սաստ-  
կանում էր. թշնամու յարձակումն այն աստի-  
կանին էր, որ նրանք չէին իմանում,  
ճան անակնկալ էր, որ նրանք չէին իմանում,  
թէ ինչ էին անում. գժի պէս միայն այն ու  
այն կողմն էին վազում, կամ տների անկիւն-  
ները մտնում և կամ գիւղից գուրս փախչում...  
Օգուտ քաղելով մի բուռն ժողովրդի այդ խառ-

Նաշվոթութիւնից, պարսիկներն ուղղակի յար  
ձակուեցին զիւզի վրայ.

Միւս կողմից անպաշտպան հայերի լաց ու կո-  
ծը սար ու ձոր էին դղբեցնում: Գիւղի փո-  
ղոցներում պատահած մարդկանցից ոչ ոք կեն-  
դանի շմաց: Խանը իր խմբի գլուխ անցած՝  
մօտեցաւ Զէյրանի ընակարանին, որտեղ շա-  
տերը կային թագնուած ազատուելու յօւսով:

Դուռը փակ էր: Խանը հրամայեց կոարել:  
Դուռը վշրուեց բաղմաթիւ հարուածներից:

Առաջինն ինքը խանը ներս ընկաւ: Նոյն  
ըստէին մթութեան մէջ մի լոյս երևաց և ճայ-  
թուն լսուեց: Գնդակը վրիպեց, բայց խանը  
զարարինայի վայրկենական լոյսից տեսաւ Զէյ-  
րանին:

Զէյրանը ձերբակալուած էր, նրա հետ և  
միւսները, որոնք այդ բոսէին գտնվում էին  
նրա տանը առանց որևէ զէնքի:

Այսուհետև պարսիկները դժոխային աղա-  
ղակ հանելով՝ մտան հայերի տները և նում պա-  
տահեցին՝ սպանեցին, ինչ տեսան՝ աւարի ա-  
ռան...:

## XXX

—Այժմ ասա, գոռնզ հայ կին. դու էիր հա-  
մարձակուել ասել, թէ «Ալիաֆկեար-խանը բռնա-  
կալ է». բռնակալն ինձ ես ասել, հա, — գոռաց  
Ալիաֆկեար-խանը Զէյրանի վրայ, որ շղթայա-  
կալ կանգնած էր խանի գիմաց:

Զէյրանի աշքերից կրակ էր ցայտում:

—Ալիաֆկեար-խան, ասաց նա, — ինչպէս  
դէմքդ է վկայում, շատ ես պարծենում քո այս  
գիշերուայ արած չարագործութեանդ համար:  
Եւ դու այս չարագործութիւնը քաջութիւն ես  
համարում... ի՞նչքան միամիտ ես և ի՞նչքան  
պարծենկոտ...: Այդ քաջութիւն չէ, Ալիաֆ-  
կեար, այլ ամօթ է քեզ, որ դու մի ակար կը-  
նոջ հետ ես գործ ունեցել և անդէն ու ան-  
պաշտպան գիւղացիների...

—Լոիր, լիքք գեաւուր կին, երեխ դու շնո  
վախենում, որ քո գիմացդ պարսից խանն է  
կանգնած: Ե՞տ նայիր և տես կախաղանը:

—Ես մահից վախեցողը չեմ, Ալիաֆկեար:  
—Հա, վախեցո՞ւ շես... Բայց քեզպէսին

այդպէս հեշտ չեն պրծացնիլ: Դու կ'ապրես,  
միայն մուլթ և խոնաւ բանտերի մէջ, իսկ այդ  
կախաղանը նրանց համար է պատրաստուած,  
որոնք կուրօրէն ամեն քայլում քեզ էին հե-  
տեռում...: Դու բաղդ կ'ունենաս միայն  
այս գիշեր հանդիսաւ պառկելու չնորհիւ իմ  
որդի Ռամազանի, Տարէք սրան Ռամազանի նըն-  
ջարանը, հրամայեց խանը:

Վերջին հրամանի համաձայն՝ Զէյրանն ար-  
դէն Ռամազանի ննջարանումն էր գտնվում:  
Ռամազանը որսի էր գնացած և այդ գիշեր  
պիտի վերադառնար:

Զէյրան-խանումի ոտների շղթաներն ար-  
ձակել էին:

## XXV

Որպէս վիրաւոր առիւծ, Զէյրանը ման էր  
գալիս Ռամազանի փակ սենեակում: Նրա հա-  
րուստ կուրծքն ալէկոծվում էր. Նրա հայկա-  
կան դրօշմ կրող սև, խոշոր աշքերը վառվում  
էին: Մի թոյլ, մի անպաշտպան կին այդպէս  
անարգուած, այդպէս անպատուած և զազա-

նի ձեռքը մատնուած...: Նա վճռել էր, ինչ էլ  
որ լինէր, կենդանի անձնատուր չլինել, և ըս-  
պասում էր, սպասում էր անհամբեր, թէ երբ  
պէտք է գայ վճռական բուպէն, երբ պէտք է  
Ռամազանը վերադառնար որսից: Նա շուտ-  
շուտ կանգ էր առնում և ականջ դնում դէպի  
դուրս, թէ արդեօք ոտքի ձայն չէ գալիս. Նրա  
ձեռքը մի ինչ-որ պինդ բան սեղմում էր գօտու  
վրայ...:

Սհան վերջապէս դուրսը մի ազմուկ լսուեց,  
որ շուտով դադարեց: Դուռը շրխկալով բաց-  
ուեց. Ներս մտաւ մի հսկայ երիտասարդ: Դա  
Ռամազանն էր:

—Օ՛,—բացականչեց նա, Զէյրանին տես-  
նելով,—վերջապէս... Բարձվ, հազար բարի ես  
եկել: Ճշմարիտ է, այսօր շատ հրաշալի որսեր  
եմ ունեցել, բայց քեզ պէս ո՞րս... Ալահն է  
ուղարկել քեզ լինձ համար:

Զէյրանը կանգնած էր սենեակի մէջտե-  
ղում և լուռ, վայրենի աշքերով անթարթ նայ-  
ում էր նրան. Նա սպասում էր, որ Ռամազա-  
նը մօտենայ իրան:

Ռամազանը ծանր զէնքերը ետ արեց, դէն  
շպրտեց և վազեց դէպի նրան:

Նոյն բուպէին Զէյրանի ձեռքը դուրս թը-  
ռաւ գօտու վրայից, մի փոքրիկ, շողշողուն  
դաշոյն փայլեց և ուժգնութեամբ խրուեց ուղ-

դակի Ռամազանի կրծքից վերև՝ կոկորդի մէջ:  
Տաք արիւնը մորթած խողի արեան պէս դուրս  
ցայտեց ծակած տեղից: Ահազին, հսկայ երի-  
տասարդը փռուեց գետին և ամբողջ մարմնով  
թափահարուելով՝ սկսեց խրխռացնել:

Դրսից ձայն-ծպտուն չէր լսվում: Արիւնոտ  
դաշոյնը նորից գօտու մէջ ամրացնելով՝ Զէյ-  
րանը հանեց իր զոհի շուխան և հազաւ. իր  
գլխին դրաւ նրա փափախը և զգուշութեամբ  
ցած թռաւ պատուհանից: Նա համարձակ ան-  
ցաւ պարսիկների խաղալած գիւղի միջով և  
քայլերն շտապեցնելով՝ անհետացաւ խորին  
մթութեան մէջ:

Ալիաֆկար-խանը շաբաթներով որոնում էր  
նրան, ամբողջ գիւղեր տակն ու վրայ էր ա-  
նում, սպանում, կոտորում, մինչեւ որ քաջ հայ  
կնոջը գատ Ղըրղալա բերդում ամրացած: Նա  
գերի շառաւ Զէյրանին, այլ վրէժինգրութեամբ  
փռուած՝ հրացանի մի զնդակով գետին գլո-  
րեց նրան.

## Զ

## ԳԱՂԱՓԱՐԻ ԶՈՅԵՐ

(Պարսկաստանի բարիների կեանքից)

## Խ

Սըեգակը թեքուել էր գէպի իր երեկոյեան  
հանգստարանը: Նրա ծիրանագոյն շառաւիղնե-  
րի տակ Խորասանի բարձրաբերձ լեռների գա-  
զաթները պսպղին էին տալիս արծաթի պէս:

Այդ պահուն գեղեցիկ տեսարան էր ներ-  
կայացնում Խորասանի մայրաքաղաք պատմա-  
կան Մաշտը:

Հուշակաւոր իմամ-Ռիզայի հսկայական մըղ-  
կիթի գագաթն աղամանդի պէս շողշողում,  
մարդու աշք էր շլցնում:

Քաղաքի այս ու այն մասում խմբերով ա-  
զօթում էին, իսկ մզկիթների գագաթներից  
մօլլաները գոշում էին՝ «Ալահ, աքպար», ո-

բովազօթողներն աւելի և աւելի էին բորբոքվում:

Դերվիշները շրջում էին խմբերով քաղաքի նեղ, անկանոն փողոցներով և փառաբանում Ալահին ու Նրա մարգարէններին:

Մի ժամից յետոյ տեսարանը փոխուեց: Մութն սկսեց կրիսել գետինը: Երկնքը զարդարուեց զարդուն աստղերով: Լուսինն իր լոյսը սփռել էր քաղաքի ու շրջակայքի վրայ:

Այդ միջոցին քաղաքի «Ճճուղ-թաղ» կոչուած մասում գտնուած մի հոյակապ շինութեան մէջ հաւաքուել էին բաւական թուռով մարդիկ, որոնք սպասում էին տանտիրոջ: Կարճ ժամանակից յետոյ եկաւ տանտէրը՝ քաղաքի յայանի սեղանաւոր եազդեցի վաճառական Հաջի-Ռամազանը: Ամենքը ոտի կանգնեցին և խոնարհութեամբ գլուխ իջեցրին տանտիրոջ: Հաջի-Ռամազանը զնաց և սենեակի ամենավերջին ծայրում բազմեց: Միւսներն էլ նստեցին: Այսուհետև սկսուեց ծխելը, որին յաջորդեց թէյը:

Ամենքն էլ, որոնք հաւաքուել էին այդտեղ, հետեւող էին Բաբի վարդապետութեան: Ներկայ գտնուողները խօսում, ծիծաղում էին իրար հետ ընտանեբար. կարծես բոլորը մի գերգաստան անդամներ լինէին: Աւելի հետաքրքրականն այն էր, որ կանայք աղատ կերպով նստած տղա-

մարդկանց շարքում, աղատօրէն խօսում և դատողութիւններ էին տալիս նրանց հետ:

—Դերվիշը չեկաւ, ասաց Հաջի-Ռամազանը:

—Չուտով կը գայ, տէր, ես տեսայ փողոցում, —պատասխանեց տանտիրոջ ծառան:

Անցաւ մի քառորդ ժամ, դուռը բացուեց և ներս մտաւ վայելչակազմ, թուխ միրուքով, միշահասակ մի տղամարդ: Ամենքը յարգանքով լոնդունեցին նորեկին, որին տանտէրը հրաւիրեց իր մօտ նստելու: Նորեկը ամենքին բարեկալուց յետոյ, գնաց իր տեղում բազմեց: Ներկայ եղողները սիրալիր հայեցքով դիտում էին նրան:

Դա ղերվիշ. Աղա-Ալապքալը էր, Մեշէդի բարիների քալողիչը: Նա ցերեկները ղերվիշը հագուստով ծպտուած շրջում էր քաղաքում, իսկ գիշերները քարոզում, ուսուցանում էր Բաբիի վարդապետութիւնը իր հայրենակից պարսիկներին:

—Սիրելիներ, այս զիշեր սովորական քարոզի տեղ ձեզ պիտի կարդամ եազդից ստացուած մի շարադրութիւն, —ասաց ղերվիշը:

—Կարդա, կարդա, այս ու այն կողմից միաբերան գոչեցին ամենքը:

Դերվիշը ծոցից հանեց մի փոքրածաւալ թերթ պարսկերէն գրուած և սկսեց կամաց ձայնով կարդալ, իսկ միւսները մեծ

հետաքրքրութեամբ ականջ էին դնում նրա ընթերցմանը:

«Անմահ Բարիի վարդապետութիւնը,— հանդիսաւոր ձայնով սկսեց կարգալ զերվիչը, —որին պատկանում է ահագին թուով ժողովուրդ, ներկայ ժամանակումս մեր եղկըում, Պարսկաստանում յայտնի է որպէս մահմէդականութեան անհաշտ թշնամիր. ուստի մահմէդականների կարծիքով բարիներիս սպանել, շարշարել, անլուր տանջանքներ տալ, նշանակում է կտարիկ Ալլահի ու նրա մարգարէի կամքը»:

«Եակայն միւս ազգերը, գլխաւորապէս քրիստոնեաները, այդպէս թշնամութեամբ շեննայում Բարիութեան վրայ. նրանք, ինչպէս վայելում է իրանց կրօնին, մեզ վրայ մարդավայել աչքով են նայում: Որպէսզի քրիստոնեաներն աւելի յարգանքով նայեն մեզ վրայ, մենք անտշառութեամբ պէտք է նրանց ցոյց տանք մեր հաւատի իւրաքանչիւր կ է տը...: Դրա համար մենք պարտաւոր ենք մի ընդհանուր գաղափար տալ Բարիութեան մասին:»

«Մի վսեմ գաղափար առիթ տուաւ Բարիի վարդապետութեանը լոյս աշխարհ գալուն: Ո՞րն է, կըհարցնէք դուք:—Ընդհանուր մարդկութեան առաջադիմութեան գաղափարը: Բոլոր մարդարարածները եղբայլներ են, նրանք պէտք է նեցուկ լինին իրար և այդ նեցուկը պէտք է լինի

կրօնը. ուստի մի կրօն, որ իր մէջ չի պարունակում այդ գաղափարը, նրա վախճանը մօտ է: Մահմէդականութիւնը դարերով իր սե շղարշով ծածկել և ծածկում է քրիստոնէութեան փըրկարար լոյսը: Նա, այդ մահմէդականութիւնը փոխանակ մարդուն կրթելու, փոխանակ գդայուն սրտի աէր դարձելու, վայրենացըել և դաժանացըել է շատերին: Ուստի նրա վախճանը մօտ է:

«Ամեն մի ազգ, որ ունի իր պատմական անցեալը—ինչպէս նաև մենք պարսիկներս, չպիտի անհետանայ աշխարհիս երեսից: Բայց մի կրօն, որ չի նպաստում ընդհանուր մարդկութեան յառաջադիմութեան գործին, նա չպէտք է գոյութիւն ունենայ: Ծհա, այդ գաղափարն առիթեղաւ անմահ Բարիին հիմնելու իր վարդապետութիւնը:»

«Ուրեմն իւրաքանչիւր բարիական թնդ լաւ հասկանայ, սր ինքը դաւանում է այնպիսի սրբազն սկզբունքներ, որոնց դաւանել և դաւանում են աշխարհիս ամենալուսամիտ մարդիկ:»

«Մենք չպէտք է սնոտիապաշտ լինինք, ինչպէս Ղուրանի դաւակները: Մենք պէտք է ձգաւենք զիտութեան...: Հեռանալով մահմէծգաւենք զիտութիւնից, մենք չինք մօտենում հին դականութիւնից, մենք չինք մօտենում հին դրիստոնէութեան, այլ նոր, զտուած քրիստոնէութեան ենք մօտենում, ինչպէս եղբայր՝

պահպանելով մեր բուն աղքային առանձնայատ-  
կութիւնը —ինքնուրոյնութիւնը»:

Երբ դերվիշը վերջացրեց ընթերցումը,  
ամենքն սկսեցին գովել յօդուածազրի լուսա-  
միտ գաղափարները: Դերվիշն իր կողմից ևս  
միքանի լրացուցիչ բացարութիւններ տուաւ,  
որով իր ունկնդիրներին մօտիկից ծանօթա-  
ցրեց յօդուածի բուն իմաստի հետ:

Երբ նա տաքացած խօսում էր և ունկնդիր-  
ները ոգեորուած լսում էին նրան, յանկարծ-  
ներս մտաւ տանտիրոջ ծառան և բացականչեց.  
—Կորած ենք:

—Ինչո՞ւ. ինչ պատահեց, —այս ու այն կող-  
մից հարց տուին ամենքը:

—Երկու սէյիդ դռան ետեսում թաքնուած-  
լրաեսում էին մեղ բոլոր ժամանակն: Ո՞հ,  
կորած ենք, կորած, գոչեց ծառան:

—Ըուտով ցրուեցէք, հրամայեց Հաջի-Ռա-  
մազանը: Ամենքը ցրուեցին դէպի իրանց աները.  
իսկ դերվիշը Հաջի-Ռամազանից շրաժանուեց,  
ասելով՝

—Եթէ վտանգ գալու լինի, թո՞ղ երկուսիս  
պատահի. մենք կարող ենք իրար միսիթարել,  
որովհետեւ գաղափարակից բարեկամներ ենք:

## xx

Առաւօտ էր:

Արեգակը, որպէս հնոցում կարմրած եր-  
կաթի գնդակ, իր գլուխը գուրս էր բերել  
արևելքից: Փշում էր զովարար զեփիւռը: Թըռ-  
չունները թփից թուփ էին ճախրում և իրանց  
ճլւրոցով թնկացնում թափանցիկ օդը:

Հետաքրիր տեսարան էր ներկայացնում  
Մաշադու կրօնապետ իմամ-Զումայի՝ քաղա-  
քի կենդրոնում գտնուած հոյակապ շինութիւ-  
նը:

Կրօնապետի թափաւորավայել պալատանը-  
ման շինութեան չորս կողմով բարձր պարիսպ  
էր քաշուած: Նրա գիւանատունն առանձին էր  
կառուցուած, որից քիչ հեռու, ծառերի ա-  
րանքում իր առանձին բաժանմունքով գտնը-  
վում էր հարեմսանան: Վերջնիս կից էր բա-  
ղանիքը, որի առաջ ընկած էր մի փոքր լճակ:

Իմամ-Զումայի առանձին բնակարանը, ուր  
գիշերում էր նա, կազմում էր մի մինարեթա-  
նման եռայարկ շինութիւն, որ ընկած էր հա-

ըեմիանալի դէմ ու դէմը: Ահա այդտեղ էր  
բնակվում մեծ Մարգարէի փոխանորդը, ձմե-  
ռը՝ ներքին, գարնանը՝ միջին, իսկ ամառը՝ ա-  
մենավերջին յարկում:

Մինարեթանման շինութեան դուան ճակա-  
տին քանդակագործի փանտազիան ստեղծա-  
գործել էր երկու զոյգ առիւծների նկարներ,  
որոնք իրանց գլուխներն իջեցրել էին իմամների  
ոպների տակ:

Կրօնապետն այդ առաւտեան, ըստ իր  
բնաւորութիւն գարձած սովորութեան, բարե-  
հաճել էր բաղանիք գնալու. իսկ ծառաների  
մի խումբ շարքով կանգնած՝ սպասում էր իր  
պետին:

Վերջապէս Մարգարէի փոխանորդը աճա-  
պարեց զուրս դալ բաղանիքից: Նա ուղղակի  
դիմեց դէպի այգու կենդրոնը, ուր գետնի վը-  
րայ փռել էին գեղեցիկ գորգեր: Այդտեղ ա-  
ռաւտեան աղօթքը կատարեց մի խումբ մօլ-  
լաների հետ: Աղօթքի վերջանալուց, դաշեան  
մատուցին նրան: Միւս հոգեռականները կար-  
գով շարուեցին նրա կողքին:

Կրօնապետը եօթանասունին մօտ, կմախք  
դարձած, աշքերը խոր ընկած, ատամնազուրկ,  
սպիտակամիրուք մի ծերունի էր: Նրա հեղինա-  
կութիւնը տարածուած էր ամբողջ Խորասանի  
բնակիչների մէջ: Ամենը յարգում և հլու հը-

պատակ էին Մարգարէի փոխանորդին: Նրա  
մի խօսքը բաւական էր լինում ամբողջ երկի-  
րը տակն ու վրայ անելու:

Նա ախորժակով ծխում և մտածում էր:

Այդ միջոցին մի կարճահասակ մօլա դի-  
մեց նրան, ասելով՝

—Ո՞վ մեծ Մարգարէի փոխանորդ, խըն-  
դիրք ունիմ, իրաւանք տուր խօսելու:

—Սրժանաւոր ծառայ, խօսիր:

—Ո՞հ, երանի թէ այս գիշեր քո նուաստ  
ծառան Ալլահին բաշխէր իր մեղաւոր հոգին:

—Ինչո՞ւ:

—Որպէսզի իր մեղաւոր աշքերով չտեսնէր  
այն «անօրէնների» երեսը, որոնք Մարգարէին  
հայհոյում ու ծաղրում են:

—Ի՞նչ... այդ ինչեր ես ասում. միթէ այս  
սուրբ քաղաքում, ուր ես ապրում եմ, կարող  
են գտնուել Մարգարէին հայհոյողներ: Ո՛չ, ո՛չ,  
այդպիսի լեզուները կ'այրեմ, եթէ լինին:

—Ո՞վ Մարգարէի փոխանորդ, այն օրից,  
երբ մեր սուրբ երկրի հողը պղծուեց մեղաւոր  
մարդկանց ոտներով, մեր երկրի վրայ կարծէք  
իջել է Ալլահի պատիքը: Մեր երկրի անու-  
շանամ գետակներն ու աղբիւրները կողցրել  
են իրանց քաղցրութիւնը. ծառերը, գետինը  
այլևս առատօրէն պտուղ չեն տալիս. և ի՞նչ-  
պէս տան, քանի որ գետաւուների ձեռք է գի-

պել նրանց սըբազան ճիւղերին...: Եւ գուցէ արեգակն էլ մեր երկրագնտի վրայ սկսէ այնպէս փայլել, ինչպէս վատ փայլում է գետառուրների բաժին հողագնտի, վրայ:

—Մօլլա Ալի-նաղի, մի տանջիր ինձ, ասա, ինչ է պատահել:

—Ա՛խ, Ա՛լլահ... մի՞թէ իմ լեզուն կարող է արտասանել այն վատ խօսքերը, որոնք լսել են ականջներս: Երանի թէ այն բռպէին խլանայի և ոչինչ չլսէի:

—Իրաւունք եմ տալիս աղատ խօսելու. խօսիր, հրամայեց կրօնապետը:

Այնուհետև մօլլա Ալի-նաղին սկսեց մանրամասնաբար պատմել Հաջի-Ռամազանի տան կայացած բարիների ժողովի մասին:

Ի՞նչ ասել կ'ուզէ, որ մօլլան աւելորդ շափաղանցութիւններով ծաղկեցրեց իր պատմութիւնը: Երբ նա վերջացրեց, կրօնապետը գոչեց.

—Ալլահ, Ալլահ, Քո ողորմութիւնը մեծ է: Ներիք, Ա՛լլահ, որ Քո ծառադ զգաստ չի եղել և այդպիսիները շունչ են քաշում ու քեզ հայինում:

Այնուհետև նա դիմեց իր շըջապատողներին և հրամայեց.

—Ինձ մօտ բերէք շուտով այն անիրաւներին:

Երկու ֆէրրէշ գուրս գնացին:

—Մահուան պէտք է դատապարտել, վլճռեց կրօնապետը:

—Այդպէս է պատուիրում նաև Ղուրանը, պատասխանեց մի տարիքաւոր սէլիդ:

Ամենքն սկսեցին երկիւղածութեամբ աղօթել:

Կէս ժամից յետոյ վարադարձան ֆէրրէշները իրանց հետ ունենալով Հաջի-Ռամազանին ու դերվիչ Աղա-Ալլապարպին:

—Հեռու, հեռու, պիղծ չներ, այդտեղ, մերկ գետնի վրայ կանգնեցէք, չհամարձակուէք իմ ընակարանը պղծել, —գոչեց կրօնապետը: —Ճան, «անօրէններ», դուք համարձակում էք Մարգարէին հայինոյիլ:

—Զրպարտութիւն է այդ, պատասխանեց գերվիշը:

—Լոիր, շնչն:

—Այդ պատիւ չէ բերում քեզ, պատասխանեց գերվիշը:

—Երկու հրախւր ճիպստ, հրամայից մեծ Մարգարէի փոխանորդը:

Նրա հրամանն անմիջապէս կատարուեց: Հաջի-Ռամազանին և գերվիշին պառկեցրին զետնին, նրանց ոտները ամրացրին մի երկար փայտի վրայ և ապա սկսեցին սաստիկ ծեծել:

Արիւնը սկսեց հոսել: Թշուառները ոչինչ չէին զգում. նրանք ուշաթափ էին եղել:

—Տարէք բանտ, փակեցէք, մինչև դրանց համախոհների գտնուելը, խրոխտ ձայնով ասաց կրօնապետը:

Փէրքէները կատարեցին նրա այդ հրամանը ևս:

### XXX

Բանտը, ուր բանտարկուեցին բարիները, խստ հետաքրքրական էր: Մի ահազին շինութիւն, որ ընկած էր կրօնապետի այգու կենդրոնում, ծառայում էր բանտի տեղ: Ոչ լուսամուտ կար և ոչ որևէ ճեղք, որով լոյս կամ թարմ օդ ներս թափանցէր:

Երկար շինութեան սենեակների կենդրոններում, հորիզոնական գիրքով, դրուած էին մի-մի երկաթեայ ձող, որոնց բաց արանքներում ամբացնում էին բանտարկեալների ոտները: Խոկ բանտարկեալները մերկ ու խոնաւ գետնի վրայ էին պառկում, առանց որևէ առողջապահական խնամքի:

Մարգարէի փոխանորդը իր բանտին մի առանձին յատկութիւն էր տուել, որով նա զանգանվում էր Պարսկաստանի կառավարութեան միւս բանտերից: Այդ կայանում էր նըրանում, որ իւրաքանչիւր բանտարկեալ պարտաւոր էր իր աղօթքը կատարել ոչ թէ օրական միքանի անգամ, ինչպէս սովորութիւն է, այլ դրա կրկնապատիկը:

Այս բանտարկեալները, որոնք սովորականից շատ էին աղօթում, նրանք մի տեսակ յարգանք էին վայելում կրօնապետից, որպէս շերմեռանդ մուսուլմաններ, հետևաբար՝ այդպիսիները թեթև պատիժ էին ստանում:

Արեգակը մայր էր մտել:

Երեկոյեան աղօթքի ժամանակ էր. բանտից մի խումբ բանտարկեալներ քշուեցին գեպի այգու կենդրոնում գտնուած լճակը՝ աղօթելու:

Ծերունի բանտապահ մօլլա Ռասուլը մըտաւ բարիների մօտ և յայտնեց, որ աղօթքի ժամանակ է:

Սակայն բարիները նրան մերժեցին, ասելով՝

—Մենք աղօթելու կարիք չենք զգում, այն էլ հրապարակով:

—Ո՞հ, Ալլահ. միթէ դուք գետուքներից էլ աւելի պիղծ ու վատ էք, —զարմանքով բացականչեց ծերունի բանտապահը և դուրս գնաց:

Քառորդ ժամից յետոյ, կրկին ներս մտաւ նա և բանտարկեալ բարիների ձեռները ամրացրեց երկաթեայ ձողում ի պատիժ իրանց անհաւատութեան:

—Տեսնում ես, Ռամազան, մարդուս ստիպում և խստօրէն պահանջում են այնպէս մըտածել ու պաշտել Աստծուն, ինչպէս կամենում է մի բռնակալ հոգեռական,—ասաց դերվիշն իր ընկերոջ, բանտապահի դուրս գնալուց յետոյ:

—Մահմեդականութեան խայտառակութիւնը հինգ դրանումն է կայանում: Նա կարծես խղճի հետ գործ շունի:

—Այդ կլոնի ներկայացուցիչներն իրանց «Ձէննէթի» զաւակներ անուանելով՝ համարձակվում են անհատական խղճի վրայ բռնանալ,—պատասխանեց Ռամազանը և խորը ախքաշեց:

—Այդ անվիճելի է. սակայն ինչ հնարքով մենք պիտի աղատուենք այս տարտարոսից:

—Մենք աղատուենք... քան լիցի. մեզ վաղը հրավարակում այնպէս կը մորթեն, ինչպէս մսագործներն են մորթում ոչխարներին:

—Միթէ այս ահազին բաղմամարդ քաղաքում չի գտնուիլ գէթ մի մարդ, որ օգնէ մեզ:

—Զարմանալի՞ բան. ենթադրենք թէ կայ, բայց ո՞վ կարող է համարձակուել այդպիսի մի

յանդուզն առաջարկութիւն անել մոլեռանդ կրօնապետին. չէ՞ որ նրան ևս մեզ հետ համախոհ անուանելով, խսկոյն կը մահացնեն:

—Ուրեմն մենք պէտք է զոհուենք:

—Անկասկած:

—Ուստի խստ ցաւ են զգում, դերվիշ, քիչ լուսութիւնից յետոյ ասաց Հաջի-Ռամազանը:

—Ո՞հ, եթէ իմանայիր ինչպիսի դըռւթեան մէջ են մատներս, քո ցաւը կը մոռանայիլ... Անգութիւները ծեծելու ժամանակ նայիլ... Անգութիւներիս էլ հարուածեցին ճիշխնայեցին, մատներիս էլ հարուածեցին ճիշխնայեցին, ասելով՝ դերվիշն իր արիւնապոտներով: Այդ ասելով՝ դերվիշն իր արիւնաթաթալս ձեռները մեկնեց դէսլի Հաջի-Ռազանը: Վերջինս շօշափեց և սարսափիեց:

Մութը կոխել էր գետինը:

Այդ պահուն կրօնապետի ֆէրբէշները տըղամարկանց և կանանց մի խումբ թուկերով կապկամծ՝ ներկայացըին կրօնապետին, որ կապկամծ՝ հրամայեց անմիջապէս բանտարկել նրանց:

Դրանք Մաշադ քաղաքի յայտնի բարիների ներկայացուցիչներն էին:

Կէս գիշեր էր:

Խորին անդորրութիւնը տիրում էր ամենուրեք: Նոր բանտարկուած բարիներն ամենասարսափելի գոյներով սկսեցին նկարագրել իրանց հաւատակիցների դրութիւնը:

Մոլեռանդ պարսիկ ամբոխը յարձակուել էր քաղաքի սակաւաթիւ բարիների վրայ, կոտորել, աւարի մատնել ամեն ինչ...: Ցղամարդ, կին և թէ ծծկեր երեխաներ՝ առանց խտրութեան, սրի զոհ էին եղել: Խոլ նրանք, որոնք հընար էին գտել, վախուստ էին տուել քաղաքից: Միքանիսը, որոնց ազատել էր տեղական իշխանութիւնը կատաղի խուժանից, կրօնապետի հրամանով՝ բռնուել և բանտն էին նետուել:

Կրօնապետի բանտում բռնուած բարիներն այդ գիշեր սկսել էին իրար հետ հաղիւ լսելի ձայնով խօսել.

—Ասա, Սանամ, ինչ եղաւ մայրդ, —արտասուախառն եղանակով հարցրեց Հաջի-Ռամա-

դանը իր գեղանի աղջկան, որ շղթայակապ ընկած էր հօր կողքին:

—Զգիտեմ, հայրիկ, հեկեկալով պատասխանեց Սանամը:

—Իսկ եղբայրդ. ինչ պատահեց նրան:

—Այս, հայրիկ. Աբասին սարվագները ուղանեցին մեր տան մէջ, բակում...:

—Սպանեցին...: Անգութներ...: Ուրեմն ամեն ինչ կորաւ, ասաց ու սկսեց դառնադին ողբալ թշուառ հայրը:

—Այն, հայրիկ, այն, ամեն ինչ կորաւ, մեր հարեան Փաթալիի աղջիկը, իմ ընկերուհի Խէլրին, այսօր ասաց, որ պարսիկները մեր խանութը նոյնպէս կողոպտել են և փշացրել ամեն ինչ:

—Ո՞հ, կորաւ երկար տարիների իմ արիւնքրտինքի վաստակը. որդուս գլխատեցին, կինս յափշտակեցին...: Երանի՛ թէ ինձ ևս այս բովէին մահացնէին:

—Հավա ինչ աէտք է լինի մեր վիճակը, այս ու այն կողմից գոշեցին միւսները, որոնք մինչև այդ՝ տիսրութեամբ լսում էին հօր ու աղջկայ խօսակցութիւնը:

—Սպասեցէք ճակատագրի տնօրինութեան, պատասխանեց դերիշը:

Բոլորն էլ յուսահատուեցին, և արդարե ինչ կտրող էին անել նրանք. ով կարող էր օդ-

Նութեան ձեռք մեկնել այդ թշուառներին:

— Ո՞չ ոք:

Այդ պահուն ներս մտաւ մի սպիտակամի-  
րուք պարսիկ հոգևորական: Դա կրօնապետի  
ամենամտերիմ-բարեկամ խորհրդատուն էր և  
ամբողջ քաղաքում յայտնի էր որպէս շերմե-  
ռանդ ուղղափառ:

Նորեկ մօլլան հրամայեց բանտապահին,  
որպէսզի չաջի-Ռամազանին և դերվիշին տե-  
ղափոխեն մի այլ սենեակ: Նըա հրամանն ան-  
միջապէս կատարուեց:

— Կանգնիր և հսկիր այդտեղ, որ ոչ ոք  
ներս չմտէ, հրամայեց նա և ինքը ներս մտաւ  
տեղափոխուած բանտարկեալների մօտ:

— Ամենից առաջ ես կը փափագէի, — ասաց  
մօլլան, — որ դուք զղայիք և ընդունէիք մեծ  
Մարգարէի կրօնը: Վայ ձեզ և ձեր հոգուն,  
եթէ այդպէս պիղդ հաւատով մեռնէք: Ափսո-  
սում եմ, որ անգիտութեամբ զրկվում էք «Ճին-  
նէթի հիւրիներից» և «Փէրրիներից»: Երևա-  
կայեցէք թէ ձեր զատաստանն ինչպէս է լի-  
նելու միւս կեանքում: Այնտեղ ձեզ մեծ Մար-  
գարի հրամանով կը ձգեն մի վիշապի փոր,  
ուր պէտք է կերակրուէք նոյն վիշապի թոյ-  
նով: Խիստ ցաւ կը զգաք, բայց չէք մեռնիլ և  
այդպէս յաւիտեան կը տանջուէք: Թշուառներ,  
մեղայի եկէք:

— Քո այդ առասպելական խօսքերից մենք  
ոչինչ չենք հասկանում, պատասխանեց դեր-  
վիշը:

— Որեմն դուք վճռել էք մեռնել:

— Ճշմարտութեան համար մեռնել, այն,  
մենք պատրաստ ենք:

— Դուք, թշուառներ, տենդային դրութեան  
մէջ էք, ոչինչ չէք հասկանում, սակայն ես  
խիստ ափսոսում եմ ձեզ. եթէ ինձ լսէք, ես  
կարող եմ ձեր կեանքն աղատել:

— Ի՞նչ միջոցով:

— Ահա, ինչպէս կ'ազատեմ: Հինց այս գի-  
շեր երկու մարդ կը ձերբակալեմ և ձեզ աղատ  
կը թողնեմ: Առաւօտեան բոլորը ծածկուած  
պէտք է քարկոծուեն, այնպէս որ ոչ ոք չի  
կարող նկատել ձեր գերերի փոփոխութիւնն:

— Դու այդ ինչ նպատակով ես անում:

— Որպէսզի ինձ վարձատրէք:

— Ո՞չ, ոչ, չարաշար սխալուել ես հաշուիդ  
մէջ. մենք այդպիսի ստորոտւթեամբ չենք ու-  
ղում աղատուել, մանաւանդ քեզ պէս «իսարե-  
բայ հոգեռականի» ձեռքով:

— Խնդրում եմ, ես ափսոսում եմ ձեզ:

— Ճնորհակալ ենք, մեղ հանգիստ թողէք:

— Ռասուլ, բարկութեամբ գուաց հոգեռ-  
բականը:

Տերունի բանտապետը ներս մտաւ:

—Այս անօրէններին տար իրանց տեղը:

Մոլլի հրամանով երկրորդ անդամ ներս բերին մի երիտասարդ սեղանաւոր հրեայ: Վերջինս դաւանափոխ էր եղել դեռ բոլորովին երիտասարդ հասակում:

—Այս, նրգան ափսոսում եմ, որ դու մոլորուել և անզիտութեամբ նետուել ես այդ շուն Բարիի պիղծ վարդապետութեան գիրկը: Ո՞չ. դու տակաւին երիտասարդ ես, ափսոս է քո կեանքը վմանգի ենթարկել:

—Այն, ես սխալուել եմ. բայց եթէ դու, մօլլա, կարողանաս ինձ աղատել, ես քեզ առատօրէն կը վարձատրեմ, պատասխանեց հըրեան:

—Բայց գիտես բարեկամ, լրջութեամբ ասաց մօլլան. քո աղատութիւնը այն պայմանով կը լինի, որ այս գիշեր դու հեռանաս քաղաքից:

—Այս, նրգան բարի ես, գոչեց իսրայէլի զաւակը:

—Ուրեմն գրիբ փոխանակագիրը:

Եւ մօլլան հրեային տուեց թուղթ ու գրիչ: Հրեան հարցըեց.

—Փողերն ուր կը կամենաս, որ ստանաս:

—Ճանչահի բանկից:

Հրեան տասը հաղար թումանի փոխանակիր գրեց և տուաւ մօլլին: Վերջինս առաւ

փոխանակագիրը և շտապ քայլերով դուրս կնաց:

Նա զրսում ծերունի Ռասուլի հետ երկար մըթմըթաց: Մի քառորդ ժամից յետոյ բանալ նետուեց աղքատներից մի դժբաղդ արարած և հրեան ազատ թողնուեց:

▼

Առաւօտ էր:

Ամբողջ քաղաքի բնակիչները խմբուած էին կրօնապետի դատաստանատանը, ուր բերին նաև բարիներին:

Կրօնապետը սպառնաց բոլորին էլ գլխատելու: Բոլոր բարիները, բացի երկուսից, առաջ գնացին և ասացին:

—Մեզ մոլորեցրին, մենք թողնում ենք Բարիի վարդապետութիւնը. մեզ ընդունեցէք, ովք Մարգարէի հաւասքը դաւանող մուսուլմաններ:

—Զեզ ներում եմ, միայն երկար տարիներ պէտք է ապաշխարանք կրէք, ձրիաբար ծառայելով սուրբ Իմամ-Ռիզայի մզկիթում, պատասխանեց կրօնապետը:

«Մենք բողոքում ենք անարդարութեան դէմ. մենք արդարութիւն, արդար դատաստան ենք պահանջում», բողոքեցին Հաջի-Ռամազանը և դերվիշը:

—Ինչո՞ւ, պի՞ո՞ծ չներ, հարց տուեց կրօնապետը:

—Դուք բռնանում էք ուրիշների անհատական խղճի վրայ և քմահաճութեամբ էք վարփում: Մենք չներ չենք, իրաւունք ենք պահանջում:

—Ձեր պատասխանը վաղը կըստանաք, պատասխանեց կրօնապետը:

Նրանց կրկին տարան բանտ:

## Վ. Ա.

Միւս առաւօտեան կրօնապետը հրաման արձակեց, որպի յայտնում էր ուղղափառներին, թէ բարիներից երկու հոգու պէտք է քարկոծել ըստ շարիաթի:

Տեղական իշխանութիւնը միջամտեց, բայց անօգուտ: Մարգարէի փոխանորդի հրամանն անդառնալի մնաց:

Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեց Մաշադ քաղաքում: Մոլեռանդ պարսիկ ամբոխը գրոհ տուալ դէպի քարկոծման տեղը:

Արեգակը բարձրացել էր հորիզոնի վրայ:

Ֆէրրէշները մահապարտներին բերին նշանակուած տեղը. եկաւ նաև կրօնապետը՝ շըրջապատուած մի խումբ մօլաներով: Սմբոխն սկսեց ցոյցեր անել: Բարիներին ձգեցին առաջուց փորուած փոսերի մէջ:

Կրօնապետը դիմեց բազմամարդ ամբոխին:

—Ով ուղղափառներ, ահա երկու չներ, որոնք համարձակուել են Մարգարէի հաւատը հայհոյել, մարդկանց մոլորեցնել: Ես, որ նուաստ ծառան եմ այդ կրօնի, սրանց մահուան դատապարտեցի, ինչպէս որ հրամայում է շարիաթը: Ես կատարեցի իմ պարտաւորութիւնը: Երանի նրան, ով մի քար կը նետէ այս փոսը, այդպիսին միւս կեսնկում ամենաերջանիկը կը լինի: Հաւատացեալներ, դուք ես կատարեցէք ձեր պարտաւորութիւնները:

Այդ ասերով՝ կրօնապետը գետնից մի քար առաւ և նետեց դէպի փոսը:

Սմբոխը հետեւեց նրան: Ահագին քարերը կարկտի պէս թափուեցին դէպի փոսերը: Մի քանի բոպէում փոսերը ծածկուեցին քարերի կոյտերի տակ:



հայ գիւղացիների համար, որոնք ամեն գար-  
նան ուխտ էին գնում:

Բայց ի՞նչ է չարսնաքարը և ի՞նչ տեսակ  
աւանդութիւն կայ կապուած նրա անուան հետ:  
Այդ ես կը պատմեմ, դիմելով իմ մանկական  
յիշողութիւններին:

## Է

## ՀԱՐՍՆԱՔԱՐԻ ԱՍԴՂԸ

(Մանկական յիշողութիւն)

## Ա

Սիւնեաց աշխարհի հոչակաւոր Տաթեավան-  
քի հարաւային կողմում ընկած Թուփ-Սարից  
քիչ հեռու, մի լեռան բարձր գագաթին երե-  
ւում է մի քար, կանացի պատկերի նմանու-  
թեամբ: Այդ քարի առաջ կայ մի ուրիշ քար,  
որ փոքրիկ երեխայի է նման: Հեռուից, երբ  
մարդ նայում է այդ քարերին, կարծում է թէ  
մի կին կանգնած՝ նայում է փոքրիկ երեխայ-  
ին, որ ընկած է իր առջեռում: Բնութեան ո՞ր-  
պիսի խաղ:

Տեղացի հայերը այդ քարը կոչում են Հարս-  
նաքար: Հարսնաքարը այդ անունը ո՞ր սիւնեցի  
գեղջուկն ու գեղջկուհին չգիտէ: Նա, այդ  
անշունչ քարը՝ առաջներում սուրբ էր շրջակայ

## ՀՀ

Մանկական օրերը քաղցր, անմոռանալի  
յիշողութիւններ են եղել իմ մէջ: Վշտացած,  
նեղուած դառն մտքերի մէջ երբ յիշում եմ  
ձեզ, իմ անցած-գնացած օրեր, ո՞րպիսի մըտ-  
քեր են գալիս ու պաշարում ինձ...:

Ճատ լաւ յիշում եմ. աշնանային մի պարզ  
երեկոյ էր: Մեր Առաջաձոր գիւղի վրանները  
դարկուած էին չարսնաքարի դէմ ու դէմ՝  
Թուփ-Սարում: Նախիրը հանգիստ էր առնում  
վրանների առաջ ընկած սարահարթում, իսկ  
գամփոնները նախիր չորս կողմը պատաժ հըս-  
կում էին նրանց ոչ թէ գողերից, այլ գիշա-  
տիչ գաղաններից:

Կանայք, խմբուած վրաններում, զրոյց էին

անում: իսկ մենք, փոքրիկներս, դրսում՝ բացօթեայ խաղում, պարում էինք:

Մեր զանազան անմեղ խաղերի հետ գիտէինք նաև մեր մեծերին նմանուել: Այսպէս, մի երեկոյ, երբ երկնքն աստղերով բոցավառուց, մենք նայեցինք երկնքին և իւրաքանչիւրս իր ընտրած աստղն էր ցոյց տալիս միւսներին:

—Ահա իմ աստղը, տեսէք, գոչեց մեր ընկերներից մէկը և ցոյց տուաւ նուստուպի \*) վրայ փայլող պայծառ աստղը:

—Ահա իմս, ասաց մի ուրիշը և մատնացոյց եղաւ Ղըռ-Ղալայ \*\*) բերդի դիմաց շողշողող խուրձը:

—Տեսէք, ընկերներ, իմ աստղը,—կանչեցի ես, երբ հերթն ինձ հասաւ. նա փայլում է ուղիղ չարսնաքարի վրայ:

—Ո՞րպիսի վատ, դժգոյն աստղ, պատասխանեցին ընկերներս:

—Ո՞վ է ասում. իմս ձերինից համ գեղեցիկ է, համ փայլուն:

—Ի՞նչպէս չէ, ծաղրեցին ընկերներս և

\*) Ղափանում նշանաւոր ուխտատեղի է:

\*\*) Ղափանումն է գտնվում. յայտնի էնակ Օշղուի բերդ անունով:

աւելացրին:—ապա ինչու պղտոր-կարմիր է փայլում: Ո՛չ, մի ուրիշը վերցըն:

Բայց ես չէի ուզում: Ընկերներիս կծունկատողութիւններն ընկճեցին ինձ: Ես լաց եղայ: Գիւղական մարդը, լինի նա հասակն առած ալեռը, թէ փոքրիկ երեխայ, չէ կարող բաժանուել իր աստղից. Ես էլ, գիւղի ծնունդ, մի տեսակ սիրով, անկեզծ սիրով կապուած էի իմ աստղի հետ: Քանի՞քանի գիշերներ մեր վրանի առաջ նստած՝ նայել և հրճուել եմ նըրանով. իսկ այժմ թողնել նրան, ուրիշն ընտրել...

—Մայրիկ:

—Ի՞նչ կայ, որդիս, ինչու ես լաց լինում:

—Մայրիկ, ընկերներս ծաղրում են իմ աստղը: Իմը, գիտես չարսնաքարի աստղն է:

—Չարսնաքարինը, խորհրդաւոր ձայնով ասաց մայրս.—գեղեցիկ աստղ է...:

—Որ ընկերներս վատ են ասում:

—Ի՞նչպէս:

—Ասում են՝ կարմիր-պղտոր է փայլում:

—Այդ էլ իր պատճառն ունի:

—Դէ, պատմիր, մայրիկ ջան:

Մեր հարևանուհիները ևս միացան ինձ և խնդրեցին մօսս պատմել չարսնաքարի մասին: Հարևանուհիներից մէկը, մի ջահէլ հարս, ասաց.

—Աննա հօրաքոյր, իսկապէս այդ չարսնաքարը ինչո՞ւ է քարացել, ով է նա: Վայ ինձ. ջրատարի մանուկն էլ մօտին քարացած՝ նայում է մօրը: Մայր և որդի քարացած՝ իրար երեսին են մտիկ տալիս...: Խեղճերի աստղն էլ՝ լինչպէս տխուր է փայլում: Ո՞վ է տեսել կամ լսել՝ աստղը կարմիր... միայն չարսնաքարի աստղն է այդպէս պղտոր փայլում...: Հրաշք է:

—Հրաշք է, այն, պատասխանեց մայրս և պատմեց հետեւելը:

### XXX

—«Մեր Սիւնիքը նըքան չար ու բարի է տեսել...: Բայց այն, ինչ որ պատմելու եմ, չլսուած մի փորձանք էր, որ սրանից տարիներ, ի՞նչ եմ ասում, զարեր առաջ կատարուեց մեր աշխարհում...:

«Հին ժամանակներում մեր աշխարհին իշխում էր մի ձահ թէ Սուլթան, վայ իմ հոգուն, գիր չեմ կարդացել, հաստատ շգիտեմ. այսքանս միայն գիտեմ, որ մի մահմեղական իշխան էր: Բոնակալ էր նա և լինչ տեսակ բըռնակալ: Նմանը ոչ ծնուել և ոչ էլ ծնուելու է:

«Նա մի պատիժ էր երկնքից ուղարկուած: Մեր հաւատը, խաչը՝ անարգուած էին, մեր եկեղեցիները պղծուած. աւետարան, սուլը գըքե՞ր, բոլորը թագցրել էինք: Ո՞ւր, ի՞նչ էք կարծում.—գետնի խորքերում, ծառերի արանքներում: Դժբաղդ էին մեր հայրերը, անարգուած մեր մայրերն ու քոյրերը, գերի էին մեր կտրիճ-եղբայրները: Հային շան աստիճանի ստորացըել, ծաղրի առարկայ էին շինել:

«Բայց միթէ այս էր բոլորը: Իւրաքանչիւր տարուայ սկզբում մեր աշխարհի ծերունիները գլխահարկը հաւաքում և տանում էին գողդո-ջիւն ձեռքով մեկնում բռնակալին: Վերջինս որպէս ողորմութիւն, ծեծում էր նրանց և ապա թէ բարեհաճում էր դրամն առնել:

«Մի անգամ գարնան, մահմեղականների նոր տարին, մեր աշխարհի ծերերը սովորականի պէս հաւաքում են հարկը, որին աւելացնում են նաև թանկագին լնծաներ: Գնում են բռնակալի մօտ: Առաջ գլխահարկն են տալիս, յետոյ լնծաները:

—Այս լինչ լնծաներ են և ինչո՞ւ քիչ էք բերել, գոռում է բռնակալը:

—Իշխան, դու հզօր ես: Ամենակարող Աստուածը տուել է բաղուկիդ զօրութիւն: Համարձակվում ենք ասելու, որ ձեր թերելի տակ մենք հարստահարվում ենք ու տանջվում...:

— Լուեցէք, ի՞նչ էք կամենում:

— Հաւասար հպատակութիւն: Տեսնում էք,  
իշխան, երկնքում մի հատ արեգակ կայ: Նա  
համահաւասար տարածում է իր ջերմութիւնը  
թէ հզօրների, թէ թոյլերի վրայ: Թագաւորի,  
իշխողի օրէնքը՝ նոյնակս հաւասար կերպով  
պէտք է տարածէ իր արդարութիւնը:

— Դեաւուրներ, պիղծ չներ, համարձակ-  
վում էք՝ ձեզ, անհաւատներիդ, հաւասարա-  
ցնելու մեղ—ուղղափառներիս հետ: Ձեր այդ  
յանդինութիւնը խիստ կերպով կը պատժուի:

«Մեր իմաստուն ծերերին բանտարկում են:

«Միւս օրը, առաւօտեան—ոչ ծագէք արե-  
գակը—հարիւրաւոր հայ ծերունիներին դուրս  
են բերում հրապարակ: Տանջանքը պատրաստ  
էք: Գետնի երեսին ցցուած էին սրածայր ե-  
ղէգներ և ապակու կտորներ:

— Հանեցէք ոտնամաննիդ, գեաւուրներ,  
հրամայեց բռնակալը:

«Ծերերը հասկանում են իրանց գլխին գա-  
լիք պատուհասը և ընկնում են բռնաւորի ոտ-  
ները, աղաչում, թախանձում են: Իզո՞ւր: Մի-  
թէ ապաւաժները որքան էլ հսկայ լինին, կա-  
ռող են զգալ:

Սրտասուքները հեղեղի պէս թափելով, մեր  
պապերը մերկացնում են իրանց ոտները: Այ-  
նուհետև մտրակի հարուածներով նրանց՝

որպէս անասունների, սկսում են այս ու այն  
կողմ քշել սրածայր եղէգների և ապակու կը-  
տորների վրայով: Միս էր, երկաթ չէր...: Սը-  
րածայր եղէգներ, ապակու կտորներ, ճոթո-  
տում են նրանց մերկ ոտները...:

«Հեծկլտոց, աղաղակ երկինք էին համում,  
տարածութեան մէջ կորչում: Գետինն իսկոյն  
կարմիր ներկուեց, արիմն սկսեց առուակի  
պէս հոսել...»:

Ծերերը գգայուն են լինում. մայրս յուզուեց,  
լաց եղաւ: Մենք ապած էինք:

— Բայց չէ որ այդ բոլորն անցած-գնա-  
ցած բաներ են, սկսեց միսիթարել հարեա-  
նուհիներից մէկը:

Մայրս կարծես նոր իմացաւ այդ և շարու-  
նակեց իր պատմութիւնը:

## ԽՎ

— «Ես անգամ ծերուների մարմինները  
բռնակալը չների կերպկուր դարձրեց: Երանի  
թէ դրանով էլ բաւականանար: Նա հանեց մի  
սոսկալի հրաման՝ կտրել բոլոր հայ երեխաների

լեզուն. թաղ մունջ երեխաներով լցուի աշխարհը...:

«Լաց, կոծ, սուդ ու շիւան ընկնում է ամեն տեղ. բռնակալի մարդիկը շրջում են մեր աշխարհում և սկսում են մանուկների, պատանիների լեզուները կարտել:

«Միւնեաց աշխարհը մի սգատուն դարձաւ. ձայներ կային, բայց հասակաւորների ձայներ: Երեխաների կանչկոտոց, խօսք, փոքրիկ տաւարածների, հորթարածների քաղցր երգեր, այլև չէին լսվում: Ի՞նչ կը լինի մի այդպիսի աշխարհ... ի՞նչ կը լինի մի տուն, ուր երեխայի ձայն չկայ...»:

«Հէնց այդ սկ օրերում լուր է տարածվում մեր սարերում, թէ զողեր անունով մի հարս բարձրացել է Թուփ-Սարից քիչ հեռու գըտնուած լեռան գագաթը և ամեն գիշեր խօսում է Աստծու հետ: Մարդիկ սկզբում չհաւատացին: Կասկածում էին: Բայց գնալով՝ լուրը ճշտուեց: Հաւաքուեցին եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, տղամարդ թէ կին, մեծ թէ փոքր և դիմեցին Թուփ-Սարը՝ լսելու Աստծու հետ խօսովին: Ամբոխը երբ հասաւ այն լեռան ստորոտը, կանգ առաւ:

«Լսվում էր մի երգ մանկական անոյշ ձայնով:

«Ամենքը երեսներին խաչ հանեցին:

— Փառք Սստծու, — ասացին, լսեցինք հայերեխայի ձայն: Սուրբ է զողերը: Նա իր երեխայի լեզուն աղատել է: Գնանք, տեսնենք ինչպէս է...»:

«Հասան լեռան գաղաթը: Զողերը խաղում էր երեխայի հետ: Երբ տեսաւ ամբոխը՝ վախեց: Խսկոյն մի սուր առաւ ձեռքը: Բայց երբ տեսաւ քահանային զգեստաւորուած, սիրտ առաւ:

— Զողեր, ասաց եպիսկոպոսը, Սստծու հետ խօսում ես:

«Կինը լուր էր. ամենքն իմացան, որ նա բացասական պատասխան չէ տալիս: Սկսուեց հարցուփորձը:

«Զողերը վերջապէս ասաց.

— Այն օրը, երբ հարաման դուրս եկաւ, որ մեր մանուկների լեզուն կտրեն, ես Աշոտիկիս առայ և փախայ այստեղ, այս աղատ լեռան գագաթը: Օրե՛ք անցան. մի անգամ, մուժ գիշեր էր, երեխան գրիկում քնած էր, իսկ ես պահպանում էի նրան, որ չլինի թէ գաղան մօտենայ՝ մուժից օգտուելով. այդ ժամանակ Աստծուած ինձ հետ խօսեց:

— Ինչո՞ւ չտրեցին քո մանուկի լեզուն, հարցը նա:

— Ես նրան առայ և փախայ այս աղատ լեռները, Տէր: Տեսնում ես, որ ու գիշեր պահում, հսկում եմ նրան:

—Եւ ինչ պիտի անես:

—Ինչ որ Դու ես հրամայել, Տէր: Իմ արիւնը երեխայիս համար չեմ խնայիլ: Աստուածինձ վրայ խաչակնքեց և հեռացաւ: Այնուհետեւ նա ինձ միշտ այցելում էր, օրհնում:

—Ապրես, Շնդեր, գոռաց ամբոխը:

—Մի օր, շարունակեց Շողերը, ես չոքեցի Աստծու առաջ, ձեռքս պարզեցի դէպի մեր աշխարհն ու ասացի. «Տէր, մեր մը մեղքի համար ես պատժում մեղ...» Միթէ այնքան դառն արտասուքը, աղօթքները, խնկարկութիւնը չեն հասնում Քո աթոռին: Եւ նա ինձ պատասխանեց.

—Տեսնում եմ այս ժողովուրդը. բայց նըազ զօթքները, խնկարկութիւնը միշտ խառն են հեկեկանքների հետ. միշտ լաց, միշտ խեղճութիւն: Ես թոյլեր, վախկոտներ չեմ ստեղծելու...: Զանձրացայ այդ անվերջ արտասուքներից, այդ թուլամորթութիւնից. Ես չեմ ընդունում լացողների աղօթքն ու աղաղակը:

—Անհաւատ կին, դու սուտ ես ասում, դու կախարդ ես, գոչեց եպիսկոպոսը և հրամայեց քարկոծել Շողերին:

«Ամրութ հաւատաց իր հոգեոր հօրը և շրջապատեց Շողերին: Փոքրիկ դաւակին իրանից քիչ հեռու կանգնեցրին: Ապա սկսեցին երկուսին էլ քարկոծել:

—Սատկեցին, —ասաց Եպիսկոպոսը և տարաւ մարդկանց իր ետևից:

## V

—«Գիշերը վրայ հասաւ: Բայց Շողերը հոգին չէր աւանդել: Նա հազիւ լսելի ձայնով կանչեց.

—Աշոտիկ:

«Բայց ձայն չկար: Աշոտիկն արդէն մեռել էր: Շողերը վշտացած սրտով նայեց դէպի երկնք և կանչեց Աստծուն: Նրանից բարձր միատղ էր փայլում, բայց կարմիր գոյն ունէր: Զիմացաւ նա, որ իր երեխայի արիւնն է այդ-պիսի գոյն տուել աստղին...: Մեռնում էր Շողերը և այդ ժամին նա լսեց Աստծու ձայնը, որ ասում էր. «Աստղը վերեսում, իսկ դու երեխայիդ հետ այդ լիռան գագաթին քար կըտրած: Թոն՝ տեսնեն մարդիկ և իմանան, որ Աստուծու խօսքը ճշմարիտ է»:

«Շողերն արդար էր:

«Այնուհետեւ հարմանքարը ուխտատեղի դարձաւ», —վերջացրեց իր խօսքը մայրս:

— Բայց արդեօք գո՞հ են ստեղծած արա-  
րածներս:

Բոլոր արարածները լոեցին, միայն գետի-  
նը բարձրածայն աղաղակեց.

— Ամենակարող Տէր, ինչու համար ինձ ըս-  
տեղծեցիր: Նրա համար, որ ամեն մի վաս-  
բանի պատուանդան լինիմ և խորամանկ օձե-  
րը պատռեն սիրտս ու իրանց թունաւոր բու-  
նը շնչն կրծքումս... ո՞հ, վայրենի գա-  
զանները մոնչան և իմ անարատ կրծքում շի-  
նեն իրանց որջերը, թէ գիշատիչ արարածնե-  
րը կեղտոտեն և արիւնլուայ անեն իմ երե-  
սը...: Աշխ, Արարիչ, ես այդ բոլոր զրկանք-  
ները տանել չեմ կարող, աղատիք ինձ:

— Դու քո հատուցումը կը ստանաս, ով  
ապստամբ գետին, պատասխանեց Աստուած:

«Անհրաժեշտ է ստեղծել մի այնպիսի ա-  
րարած, որի միտքը զարթնէ, բայց պատճա-  
ռը չիմացած՝ մահանայ: Այդպիսի արարածը,  
ասաց Աստուած, կ'աշխատէ, միւս արարածնե-  
րին կը հնապանդեցնէ. իսկ երբ կը գայ այն  
ըստէն ու կը սկսի մտածել պատճառի մասին,  
նա կը մահանայ, կը ոչնչանայ: Այդպիսի արարա-  
ծը, աւելացրեց Աստուած, թնդ լինի գետնից»:

Աստուած Գաբրիէլ հրեշտակապետին հրա-  
մայեց մի բուռն հող բերել: Հրեշտակապետն  
իսկոյն վայր սլացաւ գետին:

## Ը

# ՄԱՐԴՈՒ ՀՈԳԻՆ

(Արեւելեան զրոյց)

## Խ

Ամենակարող Աստուածը երբ երկինքն ու  
երկիրը՝ շնչաւոր ու անշունչ արարածներն  
ստեղծեց, բարձրացաւ, իր յաւիտենական գա-  
հի վրայ բազմեց և սկսեց դիտել երկինքն ու  
երկիրը:

Ո՞քան գեղեցիկ էր աշխարհը: Անվերջա-  
նալի երկնակամար, որի վրայ փայլում էին ա-  
րեգակն ու լուսինը, անթիւ մոլորակներ և  
փայլուն աստղեր, անսահման դաշտավայրեր և  
բարձրաբերձ լեռներ՝ զարդարուած գոյնզգոյն  
ծաղիկներով:

«Ամեն ինչ գեղեցիկ է», ասաց Աստուած և  
աւելացրեց.

—Գետին, քեզնից մի բուռն հող եմ վեր-  
յնում, ասաց հրեշտակապետը՝ կանգնելով գետ-  
նի երեսին:

—Ինչո՞ւ:

—Արարիչը քեզնից մի նոր արարած է ըս-  
տեղծելու:

—Ո՞հ, բարի հրեշտակապետ, աղաչում եմ  
քեզ, հեռացիր ինձնից: Խորհնուրդ տուր Արար-  
չին երկնքից ստեղծել նոր արարածը:

Գաբրիէլ հրեշտակապետը բարձրացաւ Աս-  
տուծու մօտ:

—Արարիչ, նոր արարածը երկնքից ստեղ-  
ծիր:

—Ինչո՞ւ:

—Գետինը ես անմաքուր գտայ:

—Ո՞չ, իմ կամքս անփոփոխ է: Նոր արա-  
րածը պէտք է գետնի հողից լինի:

Հրեշտակապետը կրկին վայր սլացաւ դէ-  
պի գետին:

—Գետին, ուխտս դբժում եմ, որովհետև  
Աստծու հրամանն եմ կատարում:

Եւ մի բուռն հող առնելով՝ բարձրացաւ:

Գետինն արտասուեց, նրա արտասուքներից  
գոյացան ծովեր, գետեր...:

## II

Աստուծ հողից ստեղծեց մարդուն, բայց  
դեռ հոգի չկար նրանում: Մարդն անշունչ  
ընկած էր գետնի երեսին: Աստուծու հրամանով  
բոլոր շնչաւոր արարածները եկան մարդու  
տեսութեան: Երբ բոլոր շնչաւորները ժողով-  
ուեցին, Աստուծ ասաց նրանց.

—Ձեզանից ո՞րի հոգին է կամենում մըտ-  
նել մարդու մէջ և ապլել նրանում:

Ոչ ոք չպատասխանեց:

—Դուք՝ ջրերում ապրողներ, ձեզանից ո՞րի  
հոգին է կամենում մտնել այս նոր արարածի մէջ:

—Արարիչ, աղաղակեց կետը և առաջ ան-  
ցաւ.—մենք բոլորս՝ ջրերում ապրողներս, յօ-  
ժար ենք անյատակ ովկիանոսներում ապլելու,  
բայց նոր արարածի մէջ մեր հոգին դնել չենք  
կարող:

—Դուք՝ գետնի ներսում և երեսին ապ-  
րողներ—սողուններ, թեաւորներ և չորքոտա-

Նիներ, ձեղանից ո՞րի հոգին կարող է մտնել  
նոր արարածի մէջ:

Սոզուններից օձն առաջ եկաւ և ասաց.

—Արարիշ, մենք յօժար ենք մեր ամբողջ  
մարմնով քարշ գալ, կերպարուել հոգով, բայց  
նոր արարածի մէջ մտնել չենք կարող:

Թեաւորներից փոքրիկ բգէզը թռաւ և մար-  
դու քթին նսաելով՝ ասաց.

—Փուշ, այս ի՞նչ սարսափելի արարած  
է: Ո՛չ, Արարիշ, իմ դասակարգի ամենա-  
փոքրիկներից մինչև ամենամեծերի անունով  
ես աղաչում եմ, Տէր, մենք չենք կարող նոր  
արարածի մէջ պահել մեր հոգին. աղատիր  
մեզ ևս:

Հորքոտանիներից ուղտը՝ վիզը երկարա-  
ցնելով գէպի մարդը, ասաց.

—Արարիշ, ես որ բոլոր արարածների մէջ  
ամենալժերազն ու անճոռնին եմ, իմ տղեղու-  
թեամբ հանդերձ զզվում եմ նոր արարածի  
պատկերից: Տէր, աղաչում եմ, մեղ՝ շորքոտա-  
նիներիս, ևս աղատիր:

—Դուք աղատ էք, բայց մարդը կը տիրէ  
բոլորիդ, պատասխանեց Աստուած: —Իսկ դուք,  
իմ սիրելի հրեշտակներ՝ անդրանիկներ և  
կրտսերներ, ձեր ո՞րի հոգին կարող է մտնել  
մարդու մէջ:

—Ամենակարող, բոլոր արարածները երես

դարձրին մարդու պատկերից: Մենք, որ Քո  
սիրելիներն ենք, ի՞նչպէս մտնենք այդ անճոռնի  
արարածի մէջ:

—Դուք ևս աղատ էք, ասաց Աստուած:

### III

«Միթէ մարդուն զուր ստեղծեցի. մի-  
թէ նա աւելի ստոր պէտք է լինի, քան  
միւս արարածները: —Մարդու մէջ, ասաց Աս-  
տուած, թնդ մտնէ մի այնպիսի հոգի, որ միւս  
արարածների հոգիներից ամենաչար, յանդու-  
գըն և խիզախը լինի: Մարդն իր խելքով ու  
ընդունակութեամբ բարձր լինի միւս արարած-  
ներից, իսկ գործով ստոր: Որպէս արդար հա-  
տուցումն գետնի՝ մարդն ամեն տեսակ շար-  
շարանք կրէ: Մարդը մաքով լինի երկնքում,  
իսկ անձամբ գետնի խորքում որդնոտուի... ին-  
քըն իր նմաններին յաւիտեան թշնամի լինի:  
Ուտէ իր նմաններին, ինչպէս գաղանները:  
Նախանձոտ լինի և բռնակալ, բայց կարճատե  
կեանք ունենայ, չարութիւնը ժամանակաւոր  
լինի: Ուստի, գոչեց Աստուած, «թափառական

հոգի», որ ընկեր ես դաժան օձերի, անապատների մեռցնող ցրտերի, ովկիանոսային մըրիկների, անտառների խորքում ապրող զիշատիշների, եկ և մտիր մարդու մէջ»:

Աստծու հրամանով «Ժափառական հոգին» յայտնուեց և մարդու մօտ կանգնելով՝ ասաց.

—Արարիշ, հրաժարուելով՝ հրաժարվում եմ մտնելու այս պատկերի մէջ:

—Հրեշտակներ, մացրէք այս զզուելի «Ժափառական-հոգուն» մարդու մէջ:

Հրեշտակներն իսկոյն մերկացրին սրերը։ Բայց իզուր։ «Թափառական-հոգին» ներս չմըտաւ։ Հրեշտակների վերջին փորձն եղաւ այն, որ սկսեցին հնչեցնել իրանց փողերը և այնպիսի մի գեղեցիկ ու զմայլելի հանդէս կաղմեցին, որ «Ժափառական հոգին» անզգոյշ եղաւ. կարծելով թէ այդ երաժշտութիւնը մարդու մէջ է, նա անզիտութեամբ ներս մտաւ։

Մարդու պատկերն իսկոյն սկսեց շարժուել, կենդանանալ։ Նայեց իր չորս կողմը, ոչ չկար։ Միայն լսեց մի աներեւոյթ ձայն, որ առում էր.

«Անզիտութեամբ մտար, անզիտութեամբ էլ դուրս գաս»։

Թ

## ԵՐՈՍԱՆԻ

(Պատկեր Թուրքմէնների արշաւանքներից)

I

Դեռ նոր մայր մտած արևն իր ետելից թողած ծիրանագոյն շառաւիղներով ներկել էր Թուրքանի բարձր լեռների գագաթները. երեկոյեան մեղմ ու զովարար զեփիւռը քնքշութեամբ շոյում էր նորածիլ իոտերի, թփերի թեամբ շոյում էր նորածիլ իոտերի, թփերի թուրելով նրանց։

Չուտով մութը պատեց գետինը։ Խորհրդաւոր լուսիթիւնը գրկեց բնութիւնը։ Այդ պահուն Թուրանի Դիւլ-Դաղ կոչուած սարահարթի գագաթին իջևանել էին մի խումբ թուրքմէն հրոսակներ։ Նրանք փոքրաթիւ մի խումբ էին, լաղկացած ծերունի հրոսակապետից և

միքանի ուրիշ քաջ ու անվեհեր երիտասարդ  
թուրքմէններից:

Այդ խումբը իր հետ ունէր բաղամաթիւ  
պլարսիկ գերիներ: Թուրքմէնները այն յանդուգն  
հրոսակախմբի մի մասն էին, որոնք այդ օրից  
միքանի շաբաթ առաջ, յանկարծակի յար-  
ձակուել էին Խորասանի պարսիկ խաղաղ աղ-  
դաբնակութեան վրայ, կոտորել, յափշտակել  
էին և հարուստ աւարի հետ վեցըրել նաև  
բազմաթիւ գերիներ: Վերջիններս բաղկա-  
ցած էին ալեղարդ ծերունիներից, երիտա-  
սարդներից, սիրուն կանանցից և ջահէլ աղ-  
ջիկներից:

Բոլոր գերիները կապկպուած էին միմեան-  
ցից հաստ ու երկար թոկերով և խառնիխուռ-  
ուըն կերպով թափուած մերկ ու խոնաւ  
գետնի երեսին: Գերինների մէջ լսվում էին  
հեծկառոց, լաց և աղաղակ: Իսկ թուրքմէն պա-  
հապանները նրանց չորս կողմից պատաժ՝  
հոհուում ու ծիծաղում էին իրանց զոհերի հա-  
ռաշանքների վրայ:

Ահա ութերորդ օրն էր, որ այդ թշուառ  
արարածներին սաստիկ հարուածների տակ,  
ինչպէս անպաշտպան անասունների մի հօտ,  
քշում էին զէպի հեռաւոր մի աշխարհ, գերի-  
ներին բոլորովին անծանօթ մի երկիր.... Ի՞նչ  
նպատակով: Այդ գիտէին միայն թուրքմէնները:

— Փաթմա, զաւակս, մօտեցիր ինձ. վեր-  
ջին անգամ քեզ համբուրել եմ փափագում...  
Ոյժերս նուազել են, թուրլացել եմ. մահս մօտ  
է, մօտեցիր ինձ:

Լսուեց խորին մթութեան մէջ մի տը-  
խուր ձայն:

Դա մի թշուառ ծերունի հայր էր, որ իր  
ամբողջ ընտանիքով գերի էր ընկել թուրք-  
մէնների ձեռքը: Նրա կինը, գեղեցիկ Զառան,  
ճանապարհին երկունքից ազատուելիս՝ վախ-  
ճանուել էր սոսկալի տանջանքների մէջ: Փար-  
քին, ծերունու անդրանիկ զուստրը, մօր մահ-  
ուանից յետոյ՝ երկար շապեց. լեղապատառ  
լինելով՝ նա էլ մահացել էր ճանապարհին: Խոկ  
Սատղին, ծերունու մինումար որդին, քսան  
տարեկան այդ անվեհեր պատանին, երէկ ճա-  
նապարհին սրախողիսող էր եղել Վալիխանից,  
որովհետև այդ պատուասէր պատանին սպառ-  
նացել և հայրոյել էր հրոսակապետին այն բա-  
նի համար, որ վայրենի ու կըքու ծերունին  
անցեալ գիշեր թշուառ Փաթմային շարչա-  
րել էր:

— Հայրիկ, ես էլ եմ մեռնում: Ախ, այն  
ինչպիսի տանջանք էր, որ անցեալ գիշեր ես  
կըքցի...: Ո՞հ, հայրիկ, ուր է Սատղին. իմ զն  
եղբայր, ուր զոհուեցիր ի՞նձ համար: Ալահը  
թնդ վարդեր բուսցնէ քո ճանապարհին, անձ-

նազ՞հ եղբայր...: Հայրիկ, շարունակեց Փաթման յուղուած և տիտուր եղանակով, աեղիցս շարժուել չեմ կարողանում. ես էլ եմ վափագում շուտով մեռնել. օրհնիք և համբուրիք ինձ վերջին անգամ: Աշխ, ո՞քան ատելի է այսպիսի սև կեանքը: Անիծուեն բռնականները, յաւիտենական անէ ծք նրանց օքէնքներին, որ քաղցը կեանքը դառնացնում ու թունաւորում են:

—Զաւակս, մի յուղուիր և մի հայհոյիր: Անիրաւ պահապանները շան հոտառութեամբ վիտում են մեր մէջ, կարող ենք յանկարծ մատնուել:

—Ո՞ւր էր. երանի՛ թէ այդպէս լինէր:

—Ո՞չ, զաւակս. մահուան քաղցրութիւնը իր բնականութեան մէջ է:

Խրատում էր ծերունի հայրը իր աղջկան. վերջինս լրեց:

Այն, թշուառ Փաթման ստիպուած էր լըռել: Միայն խորին մթութեան մէջ լսվում էր մի հեծեծանք, մարդու սիրտ ու հոգի մաշող մի ախուր հառաշանք:

Այդ գեղեցկուհի Փաթման էր, որ իր ներ՝ քին զգացմունքները խեղիկ չկարողանալով ծերունի հօրից ծածուկ ողբում էր իրանց տըլիուր, սև ճակատագիրը:

## II

Կէս գիշեր էր:

Լուսինը շողշողում էր ուղիղ Գիւլ-Դաղի վրայ: Ծերունի հրոսակապետը ընկել էր անոյշ քնի գիրկը: Նրա միւս ընկերները շըջում էին գերիների մէջ. դառն հառաշանքի ծանր յոգոց, լաց ու կոծ էր լսվում ամեն կողմից, ուր ոտք էին դնում վայրենի թուրքմէնները: Խեղճ գերիների վիճակը աւելի ծանր էր: Տասներորդ օրն էր, որ նրանք հացի պատառ չէին իրանց բերանները: Կերակրվում էին վայդրենի բոյսի արմատներով: Օատերը քաղցից հիւանդացել, մեռելի գոյն էին ստացել: Միմեանցից կապկպուած՝ նրանցից շատերը անըղդայացած, ընկել էին խոնաւ գետնի վրայ: Միքանիսն էլ ցաւից տանջուելով՝ զանազան տիտոր բացականչութիւններով էին արտայատում միմեանց իրար վշտերը:

Իսկ երկու ծերունի գերիներ այդ պահուն միմեանց հետ հազիւ թէ լսելի ձայնով խօսում էին:

—Ո՞րքան քաղցը ու համեղ է այս չորսած հացի պատառը, ասաց նրանցից մէկը և չորսած հացից մի փշրանք կտրելով՝ մեկնեց դէպի միւսը: Վերջինս ընդունեց, ասելով.

—Սարուր, ո՞րքան չնորհակալ եմ քեզանից. բայց ասա, ո՞րտեղից է այս փշրանքը:

—Այդ հայրենիքից մնացած վերջին փշրանքն էր, որ թագցրած պահում էի գօտիիս մէջ:

—Հայրենիքի փշրանքը՝ այն, քաղցը ու համեղ է հայրենիքի վերջին փշրանքը. բայց տեսնում ես, Սարուր, շարունակեց ծերունին, լուսինը ո՞րպիսի գեղեցկութեամբ է փայլում: Եթէ ընութեան այսպիսի խորհրդաւորութիւնը շմինչը, ես ինձ թշուառ և անբաղդ կը զգայի:

—Միթէ, Զարիֆ, ոգեսրվում ես լուսնի այդ գտարկ փայլով: Նրա շողշողումներից մեզ ինչ օգուտ: 2է որ մենք այժմ գերիներ ենք:

—Սարուր, լսիր ինձ: Լուսնին նայելով՝ ես բոլորվին չեմ յափշտակվում նրա փայլից: Բայց գիտեմ ինչ կայ. նայելով նրան, իմ յիշողութիւնները, վաղեմի օրերիս քաղցրութիւնները վերակենդանանում են իմ մէջ: Նայելով լուսնին, ես բնաւ չեմ յափշտակվում նրա արտաքին փայլից. նա ինչ սիրունութիւն

ունի: Բայց այդ երկնքի զարդարանքը մարդուս զգացմունքով ու մտքով անմիջապէս տանում-հասցնում է հայրենիք: Իսկ հայրենիքի մէջ, նրա սառը հողի ծոցում՝ գիտես, քանի-քանի թանկագին շիրիմներ կան: Մենք այժմ գերիներ ենք. իսկ գերիներին յատուկ է երազական աշխարհի ցնորքների մէջ ապրել:

—Բայց ես ատելով ատում եմ երազական աշխարհի ցնորքները, որոնց մէջ ոչ մի ճշմարտութիւն չկայ, լլջութեամբ պատասխանեց Սարուրը:

—Ի՞նչպէս, զարմանքով հարցըեց Զարիփը:

—Լսիր, Զարիփ, կեանքի դառը փորձերը, աւազ, խիստ ուշ եկան ինձ համոզելու, որ մարդը չպէտք է երևակայութեամբ ապրէ: Ի՞նչ է երեակայութիւնը—երազ: Բայց երազի մէջ ովքեր երջանկութիւն վայելեցին, կեանքի բայլիքներով մսիթաբուեցին: Թոյլ բնաւորութիւններն են միայն, իմ կարծիքով, երազական աշխարհի մէջ սաւառնում, ինչպէս թըռչունները օդի մէջ: Մտածիր,—շարունակեց Սարուրը,—կենդանիներն անդամ իրանց գոյութիւններն են միայն, իմ կարծիքով, երազական աշխարհի մէջ սաւառնում, ինչպէս թըռչունները օդի մէջ:

—Դրանով ինչ ես ուզում ասել, հարցըեց Զարիփը:

—Ուզում եմ ասել, որ զգացմունքները ա-

ամնց գործի՝ մարդուն թշուառացնում են: Թշուառութեան հետեանքը գերութիւնն է, որի մէջ ընկած ենք մենք: Իսկ լսելը, թարմ ու առողջարար միտքը մարդուս երջանկացնում է: Մարդկային կեանքի բուն նպատակը՝ երջանկութիւնն է, որ մշտական բաժին է ընկնում յաղթողին:

—Եւ դու այդ բոլորը առանց խղճահարուելու ես ասում:

—Այս, դրական կերպով պատասխանեց Սաբուրը:

## III

Նրանք լոեցին: Երկու ծերունի գերիները, ըստ երեսոյթին, ընկել էին ծանր մտածողութիւնների մէջ: Նրանցից մէկը, Զարիֆը, սէխտանցի էր, Մեշչդ ուխտի գնալիս՝ ճանապարհին գերի էր ընկել: Իսկ միւսը՝ Սաբուրը, բուն թուսեցի էր, բաւական փորձուած մի ծերունի: Սաբուրը Խորասանում յայտնի էր որպէս ամենալաւ բանաստեղծ: Նա հեղինա-

կած ունէր «Համբերութիւն» \*) անունով մի գիրք: Գերութեան մէջ այդ երկու ծերունիները ծանօթացել էին իրար հետ: Բայց ինչպէս կարծիքների, այնպէս և նրանց աշխարհայեցողութիւնների մէջ մեծ տարբերութիւն կար: Զարիֆը մի տեսակ յափշտակուած էր Սաբուրով: Նրանց մէջ երկար լուսակած էր տիրում:

—Սաբուր, ես շատ անգամ եմ կարդացել քո «Համբերութիւնը»: Ես յիշում եմ նրանից նոյնիսկ միքանի գեղեցիկ կտորները:

—Ի սէր Ալլահի, լոիր, մի վրդովիր ինձ: Աղաշում եմ քեզ, խղճա ծերուկիս:

—Բայց դու վիլիսովիայարար մտածել գիտես, ինչո՞ւ ես ընկնդում:

—Ո՞վ է վիլիսովիայ. այդ ինչե՞ր ես խօսուում, ծերուկ: Ահա կեանքի վիլիսովիան: Այդ ասելով՝ Սաբուրը մատը մեկնեց գէպի թուրքմէն պահապանը, որ քիչ հեռուում կանգնած՝ լուսնի լոյսի տակ սրում էր իր կեռ-թրի ծայրը:

\*) Այս պատկերի նիւթը տուել է ինձ Զարիֆ անունով մի բանաստեղծ, Խորասանում 1895 թ.: Նա գերի էր ընկել թուրքմէնների ձեռքը, որոնք նրան վաճառել էին խիվացիններին: Երբ ուսուները վերջնականապէս տիրեցին Միջին-Ասիային, պարսիկ գերիներն աղատուեցին և վերադարձան Պարսկաստան:

—Այն յիմար ու գաղանակերպ թուրքմէնը, որ իր թուրք սրում է մարդկանց գլուխները թոցնելու, նա փիլիսոփայ է...: Աւաղ, միշէ փիլիսոփայութիւնը այդքան այլակերպուել է, դառնադին հառաջանքով բացականչեց Զարիֆը:

—Այն, Զարիֆ, հաւատացիր և համոզուիր, որ նա է իսկական փիլիսոփան: Ասածիս դէմ, հանգիստ եղանակով շարունակեց Սարուը, դու առարկութիւններ կ'անես, փաստեր կը բերես, ով գիտէ, որքան երկար ու սիրուն խօսքեր կ'ասես, որ ինձ հերքես: Բայց ոչ, ես կը կընում եմ՝ թուրքմէնը՝ բռնակալական տիպն է ժամանակակից փիլիսոփայի:

—Ո՞հ, Սարուը, դու ընկճվում ես:

—Միշէ պարզ ճշմարտութիւնն ասելով՝ ես ընկճվում, յանցանք եմ գործում: Ես ասում եմ, որ այն վայրենի թուրքմէնը՝ աւելի քան մենք, փիլիսոփայ է: Սա պարզ է և բանականութեան մօտ: Ի՞նչ է փիլիսոփան: Խելօքներից ամենաիմաստունը: Իսկ խելքը նախախնամութիւնից ինչու համար է մարդուն տուած.—յաղթելու: Ուրիշ կերպ հասկանալու նպատակ չկայ: Ո՞վ յաղթեց, նա եղաւ խելօքը: Իսկ խելօքներին կոչում են փիլիսոփաները: Մենք յիմարներ էինք, մեր զէնքերը ոչնչացած էին, զրա համար էլայդ թուրքմէնը, որին դու, Զարիֆ, վայրենի, գաղան անունով

կոչեցիր, մեզ յաղթեց և գերեց: Մենք այժմ գերիներ ենք: Մեզ կարող են հայնոյել, սպանել, նոյնիսկ միքանի թումանով ծախել: Ես շատ անգամ եմ լսել, որ մեզմէս ծերուկներին բուլարալի և Խիվայի կողմերում փոխում են աւանակների հետ: Տեսնում ես, Զարիֆ, մենք ինչ արժենք մեր փիլիսոփայութիւններով: Հասկացար:

Զարիֆը չպատասխանեց: Կրկին աիրեց լուռութիւն: Երկու ծայրայեղ զգացմունքներ իրանց բոլոր ծանրութեամբ ճնշում էին գերի ծերուկնիներին: Վերջապէս Զարիֆը վրդովուած ձայնով հարցցրեց.

—Ուրեմն փիլիսոփայութեան գաղանիքը յաղթելու մէջ է կայանում:

—Այն. նայիր ընուռթեան և տես՝ մըքան ներդաշնակութեամբ և փիլիսոփայարար են շրջան առնում նրա յաւիտենական օրէնքները:

—Բայց մենք արժանի էինք այս վիճակը կրելու:

—Մենք անպէտք, ոչնչ արարածներ էինք: Այժմ ընկել ենք մեր իսկական վիճակի մէջ: Հիմա մենք ողորմելի սարուկներ ենք: Աշխարհում, առաջ տարաւ իր խօսքը Սարուը, ոչ մի բան այնքան չեմ տառում, որչափ ստըռուկներին: Մտածելը: Աւելի զաղալի ինչ կայ երկրագնախի վրայ, քան լինել սարուկ, գերի:

Մինչդեռ երկու ծերունիները այսպիսի զբոյցով էին զբաղուած՝ յանկարծ սարահարթի վրայ աղաղակ բարձրացաւ: Լսուեցին հրացանների միքանի ճայթիւններ: Հրոսակալիսումբը մի ակնիթարթում ոտքի կանգնեց: Զարթնեց և Վալիխան հրոսակապետը: Թուրքմէնները կապկի արագութեամբ թռանիրանց ձիանների մէջքին և առիւծի կատաղութեամբ յարձակուեցին թշնամու վրայ, որ դէպքից օգտուելով՝ ուզում էր գերիներին յափրտակել: Կուիը օրհասական էր: Երկու կողմից ընկան միքանի դիակներ: Վերջապէս հրոսակախմբին յաջողուեց թշնամուն ջարդել և փախցնել դէպի լեռները:

Այսուհետև շտապ պատրաստութիւններ աեսնելով՝ Վալիխանի հրոսակախումբը՝ պարսիկ գերիներով սարահարթի գագաթից իջաւ դէպի Թուրքանի լայնածաւալ դաշտավայրը:

Լուսաբացին էր:

Անապատ էր, անեղը անապատ: Թուրքմէնների հրոսակախումբը հասել և հանգիստ էր առնում Թուրքանի Կարա-Գում կոչուած անապատի մէջ: Իրանի գեղեցիկ լեռները մնացել էին նրանց ետևում: Միայն շատ հեռուում մթին էին տալիս Թուրքանի և իրանի սահմանագլուխներում ընկած մի շարք լեռների գագաթները: Խսկոյն միքանի վրաններ զարկուեցին, ուր տեղաւորուեցին իրանք՝ հրոսակախմբը իրանց նժոյգներով: Խսկ գերիները կապանքներից ազատուած, թափուած էին այսու այն կողմում: Ո՞րքան յուզիշ էր տեսարանը: Թշուառ գերիներից շատերի մերկ մարմնի այս ու այն մասի վրայ պարզ և որոշակի երևում էին զանազան հարուածների, վէրքերի նշաններ: Աւելի թշոյերը սոսկալի տանջանքներ էին կըել ճանապարհին: Այդպիսիներին ծեծել, թշրի ծայրերով ծակոտել էին: Կանանցից և փոքրահասակ պատանիներից ու

աղջիկներից միքանիսը ճանապարհին վախ-  
ճանուել էին:

—Սաբուր, ուր մնաց երեկուայ այն տանջ-  
ուող խեղճ աղջկայ դիսակը:

—Մութ էր, չգիտեմ. բայց կարծում եմ  
հօր հետ ժայռերի մէջ մնացած պէտք է լինի:

—Եւ երկու անյայտ անշիրիմ դիսկներ մը-  
նացին այնտեղ, ժայռերի մէջ...: Խեղճ աղ-  
ջիկ, թռչունները, ցիները պէտք է կացահա-  
րեն քո այնքան սիրուն աչերը, այնքան ըզ-  
գայուն սիրտը՝ որ, ով գիտէր, որպիսի բարա-  
խումներով տրոփում էր, բաժին պէտք է լինի  
գաղանների սուր ու պատառող ժանիքներին:

—Այն, նրանք դժբաղներ էին: Բայց բազ-  
դաւոր էին, որ միասին թողեցին այս աշ-  
խարհը:

—Բայց այս ի՞նչ աղմուկ է, բացականչեց  
Սաբուրը և հետաքրքրութեամբ նայեց դէպի  
վրանների կողմը:

Թուրքմէններից միքանիսը շրջան էին կազ-  
մել: Նրանցից մէկը մի լէշ քաշ տալով բե-  
րաւ ձգեց շրջանի մէջտեղ: Այդ գիշերուայ  
ճակատամարտում վիրաւորուած մի ձիու դիտակ  
էր, որ այդ առաւօտեան հողաբլրին համնելուց  
յետոյ վշել էր իր շունչը: Խոկոյն վրաններից  
դուրս բերին պղնձեայ մեծ կաթսաներ: Զիու  
լէշը մի ակնթարթում թրերով մաս-մաս արին

և թափեցին կաթսայի մէջ: Յանկարծ աղմուկ  
բարձրացաւ, թուրքմէնները այս ու այն կողմ  
ընկան: Երեսում էր, որ նրանք մի բան էին ո-  
րոնում: Անցաւ միքիչ ժամանակ: Թուրքմէննե-  
րից երկու հոգի եկան դէպի գերիների կողմը:

—Զարիֆ, այսօր մի անսովոր բան է պա-  
տահելու. աղօթիր, եթէ հաւատում ես հոգու  
անմահութեան:

Գերիների ամբողջ խումբը յանկարծ ցըն-  
ցուեց: Լաց ու ալազակ բարձրացաւ:

—Ո՞հ, մորթում են, մորթում...: Ինչու  
կարեցին այն եազդեցի վաճառականի գլուխը,  
լալախառն ձայնով բացականչեց Զարիֆը:

—Վերջին կատակերգութիւնը պէտք է կա-  
տարուի: Աղօթիր:

—Ո՞հ, կուրացէք, աշքեր, այն ի՞նչ են ա-  
նում. տես, տես, Սաբուր. կտրեցին երկրորդ  
դլուխը: Ես ճանաչում եմ այդ յաղթանդամ  
մարմնով սիշկարեցի զերլիշին: Խեղճ դերվիչ...:  
Ասա, Սաբուր, դու իմաստուն ես, այս ի՞նչ  
բարբարոսութիւն է:

—Թող ջինջ երկինքն այլևս չփայլէ իմ ա-  
լեռ զլիսիս: Մայր հողը թող լինի իմ բա-  
ժին բաղդաւորութիւնը այս աշխարհից: Խակ  
դուք, երկինք և աստղեր, այդպէս լուռ վր-  
կաներ մնացէք, ինչպէս դարեսը ապառած-  
ները:

— Բայց կ'ասես, վերջապէս, այս բարբարութեան զաղտնիքը. զալիս են դէպի մեղ:

— Մի վրդովուիր, Զարիփ, եռոտանու ոտելը իմ գանգով լրանում է:

— Այս, այդ չնշին բանի համար այսքան բարբարոսութիւն...: Բայց ես եռոտանիներ շինել գիտեմ. ոհ, անիրաւներ, անիրաւներ...:

— Քո փիլիսոփայութիւնը մեղ չի աղատի: Նրանց գանգերի եռոտանի է հարկաւոր: Մինչդեռ մենք, ստրուկ վերիներս, զբաղուած էինք «խօսքի փիլիսոփայութիւններով», աղատ, վայրենի թուրքմէնները «գործի փիլիսոփայութեան» դիմեցին:

Այդ խօսքերը միայն կարողացաւ արտասանել խեղճ Սարուը: Մօտեցաւ շիլ աշքերով թուրքմէնը և թրի մի հարուածով թոցրեց ալեղարդ ծերունու գլուխն ու տարաւ դէպի կաթսաների կողմը:

—————


Թշուառ Զարիփը՝ քարացած հայեացքով նայեց դէպի վրանների կողմը, ուր կաթսան եռում էր «գանգերի եռոտանու» վրայ: Կրակի բոցերը թեթև քամուց հրեղէն բոցեր էին ար

ձակում անապատային տիսուր տարածութեան մէջ:

— Այն, նա փիլիսոփայ էր, բացականչեց Զարիփը:

Եւ արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորուեցին նրա ճերմակ միջուքի վրայով:

Գ. Ե. Բ. Զ.





Գիշն է

**25**

կոպէկ.



«Ազգային գրադարան



NL0357227

50994